Azg
armenian daily
25 ՅՈՒՆԻՍ 1998 ՀԻՆԳՇԱԲԹԻ # 113 (1616)

ԱՄՆ Սենատի հանձնաժողովը հակահայկական օրինագիծ ընդունեց

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 24 ՀՈՒՆԻՍ, ՍՆԱՐՔ: Այսօր ԱՄՆ Սենատի միջազգային հարաբերությունների կոմիտեն ընդունեց S-1344 օրինագիծը, որը հայտնի է որպես «Մեսամի ուղու մասին» ակտ: Կոնգրեսական Բրեդ Շերմանի նախաձեռնած այս նախագիծը փաստորեն Վաշինգտոնի վարչակազմին հնարավորություն է տալիս շրջանցել «Ազատության աջակցության» 907-րդ հոդվածը, որն արգելում է ուղղակի ամերիկյան օգնության տրամադրումը Ադրբեջանի կառավարությանը պատճառական Բաքվի կողմից Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հանցավոր շրջափակման պատճառով: Օրինագծի ընդունման օգտին քվեարկել է կոմիտեի 10 անդամ, դեմ՝ 8: «Մեսամի ուղու մասին» ակտը ներկայացվել է Սենատի ընդհանուր քննարկմանը:

S-1344 օրինագծի դեմ քվեարկած սենատորներ Պոլ Սարբանեսը, Ջո Բայդենը եւ Ջոն Քերրին դատապարտեցին կոմիտեի այսօրվա որոշումը, ընդգծելով, որ «Մեսամի ուղու մասին» ակտը Ադրբեջանում Հեյդար Ալիեւի գլխավորած հանցավոր հավակնոտ վարչակազմին գործելու ազատություն է տալիս եւ հակասում է ամերիկյան ու միջազգային իրավական նորմերին»:

ԱԺ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

Անցյալ սեփականաշնորհման պերճանքն ու թշվառությունը

Գինու, կարամելի, պահածոների եւ այլ գործարանների միզերային գներով

ՆԱՐԻԿԵ ԳԻԼԲԱՐՅԱՆ

Մինչ խորհրդարանում քննարկում են «Կոնյակի» գործարանի մասնավորեցման լույսն ու սվերը, Ազգ վերահսկիչ պալատն (ՎՊ) արդեն ավարտել է 96-97 թթ. զանգվածային սեփականաշնորհման տարիներին մասնավորեցված 600-ից ավելի ձեռնարկությունների սեփականաշնորհման ընթացքի աուդիտը (տեղեկանքը հրապարակվել է ՎՊ 1997 թ. տարեկան հաշվետվության մեջ): ՎՊ նախագահ Ա. Ենս Թավադյանի համոզմամբ, 96-97 թթ. կատարվել են օրենքի խախտումներ, որ կասկածի են ենթարկում այդ սեփականաշնորհման օրինականությունը: Այսպես՝ 510 ձեռնարկություններում նկատվել է թերբաժանորդագրություն: Բաց բաժնետիրական ընկերությունների (ԲԲԸ) եղանակով սեփականաշնորհումը համարվում է կայացած, եթե բաժանորդագրվում են ձեռնարկության բաժնետոմսերի 25 տոկոսը, չվաճառված բաժնետոմսերն այս դեպքում պետք է մնային պետության տնօրինության ներքո: Նշված 510 ձեռնարկությունների մասնավորեցման դեպքում թերբաժանորդագրումը հանգեցրել է կանոնադրական կապիտալի նվազեցման, որը օրենքով նախատեսված չէ: Այսպես, «Կոնյակի» գործարանի սեփականաշնորհման ընթացքում իբրեւ չարագույժ նախադեպ հիշատակված Երեւանի գինու գործարանը գնահատվել է 425 մլն դրամ: Բաժանորդագրման է դրվել դրա 80 տոկոսը՝ 340 մլն դրամ: Բաժանորդագրվել են բաժնետոմսերի 41 տոկոսը, փաստացի 136.7 մլն դրամ: Արդյունքում կանոնադրական հիմնադրամը դարձել է 117.8 մլն: Ընդ որում բաժանորդագրության 136.7-ը կատարվել է 6835 վաուչերով, եթե հաշվենք դրանց գինը 96 թ.-ին 10 դոլար, ապա Երեւանի գինու գործարանը սեփականաշնորհվել է 70000 դոլարից փոքր-ինչ ավելի գումարով, ինչը 40 անգամ ավելի էժան է, քան «Կոնյակի» գործարանային համալիրի ներկայիս գինը:

Ըստ օրենքի տառի՝ Երեւանի գինու գործարանի չվաճառված բաժնետոմսերի 59 տոկոսը պետք է հանձնվեր պետության տնօրինությանը, ինչը չի կատարվել, եւ այսօր անհայտ է ոչ միայն այդ բաժնետոմսերի, այլեւ գործարանում 96 թ. առկա կոնյակի սպիրտների եւ կոլեկցիոն գինիների պաշարների ճակատագիրը: Իսկ հայկական տեսակային գինիները վերացան:

Տես ► էջ 2

ԱՐՏԱՔԻՆ

Թուրքիան, բնականաբար, դատապարտել է Հայաստանի արտաքին գործերի նախարարի հայտարարությունը

ԱՆԿԱՐԱ, 24 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Թուրքիան դատապարտել է «Լեռնային Ղարաբաղի բռնակցման հնարավորության վերաբերյալ» Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի հայտարարությունը՝ «այն դեպքում, եթե 3-4 տարվա ընթացքում նրա հիմնախնդիրը չլուծվի»: Թուրքիայի արտաքին խաղաղական գերատեսչության ղեկավար Իսմայիլ Ջեմը, ինչպես երեքշաբթի օրը հաղորդել է այդ երկրի արտգործնախարարության պաշտոնական ներկայացուցիչ Նեջաթի Ուլկանը, նշել է, որ հայկական կողմի հայտարարությունը «կարող է ծայրահեղ վտանգավոր հետեւանքներ ունենալ տարածաշրջանի խաղաղության համար»:

Դիվանագետն ընդգծել է, որ «երեւանը հերքական անգամ ցույց տվեց, որ անզիջողություն է ցուցաբերում ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ լուծման բանակցություններում եւ ցուցադրեց իր իսկական մտադրությունները»: Թուրքիայի արտգործնախարարության ներկայացուցիչը Հայաստանի նոր ղեկավարության կողմից Մինսկի խմբի խաղաղ ծրագիրը չընդունելը համարել է բանակցային գործընթացի «հիմնական խոչընդոտը»:

Ուլկանը հույս է հայտնել, որ ԵԱՀԿ-ի Մինսկի գործընթացի համանախագահները «համաձայասխան գնահատական կտան Հայաստանին, որն սպառնում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը»:

Մեսրոպ արք. Մութաֆյանը՝ Կոստանդնուպոլսի պատրիարքի փոխանորդ

ՍՏԱՄԲՈՒԼ, 24 ՀՈՒՆԻՍ, ՍՆԱՐՔ: Հայ առաքելական եկեղեցու Կոստանդնուպոլսի (Ստամբուլի) պատրիարքարանի Կրոնական ժողովը, ի հակակշիռ թուրք կառավարության պահանջների եւ սպառնալիքների, Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանին հաստատեց Կոստանդնուպոլսի պատրիարքի փոխանորդ: Թուրքիայի հայերի հոգեւոր առաջնորդները միաձայն հայտարարեցին, որ Մութաֆյան սրբազանը Թուրքիայում հայկական եկեղեցու լիիրավ ներկայացուցիչ է եւ մինչեւ պատրիարքի առաջիկա ընտրությունները իրավասու է ղեկավարելու պատրիարքարանի ներքին եւ արտաքին գործերը:

Ինչպես արդեն հաղորդվել է, պաշտոնական Անկարան մեղադրում է Մութաֆյանին «պահպանողական ազգայնամոլության» մեջ եւ անթույլատրելի է համարում նրա ընտրվելը Թուրքիայի հայերի հոգեւոր առաջնորդ: Թուրքական կառավարությունը խոստացել է խոչընդոտել հայ պատրիարքի ընտրությունները այնքան ժամանակ, քանի դեռ Մութաֆյանը չի «լեզոտազվել»: Կոպտորեն միջամտելով հայկական եկեղեցու ներքին գործերին, Անկարան սպառնացել է հայերին զրկել նրանց նվազագույն իրավունքներից, եթե նրանք շարունակեն հակառակվել թուրքական իշխանություններին: Նույնիսկ, ցանկանալով վարկաբեկել Մութաֆյանին տեղի համայնքի եւ համայն հայության աչքում, թուրքական կառավարությունը սպիտել է արքեպիսկոպոսին հանդես գալ Ֆրանսիայի Ազգ ընդունած «Հայերի ցեղասպանության հրապարակային ճանաչման» հատուկ բանաձեւը դատապարտող հայտարարությամբ: Սակայն Կրոնական ժողովի վերջին որոշումը վկայում է, որ թուրքահպատակ հայերը չեն ուզում կուրորեն ենթարկվել պաշտոնական Անկարայի անօրինական պահանջներին:

«Հայկական ավիաուղիների» սեփականաշնորհման ժամկետը հստակ չէ

ԵՐԵՎԱՆ, 24 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այս օրերին շատ է խոսվում «Հայկական ավիաուղիների» սպասվող սեփականաշնորհման մասին: Նույնիսկ մի քանի կուսակցություններ կանխավ քննարկումներ են կազմակերպում ու դիրքորոշում են արտահայտում այս հարցի վերաբերյալ՝ անշուշտ նկատի ունենալով կոնյակի գործարանի սեփականաշնորհման փորձը:

Արմենպրեսի թղթակիցը հարցի պարզաբանման խնդրանքով դիմեց ՀՀ վարչապետ Արմեն Դարբինյանին: Վերջինս նախ նշեց, որ «Հայկական ավիաուղիները» պետք է կառավարվեն եւ ղեկավարվեն մասնագիտացված կազմակերպության կողմից: Եվ, այդ տեսակետից, «պետական ավիաուղիները երբեւէ ավելի արդյունավետ չեն աշխատելու, քան սեփականաշնորհելու դեպքում»:

Այլ հարց է, նշեց Ա. Դարբինյանը, թե ինչ մեթոդներով է սեփականաշնորհումն իրականացվելու: Կառավարությունը նախատեսում է, որ որպես առաջին քայլ կլինի գործընթացին մասնավոր կոորդինատորի ներգրավումը: «Կլինի հստակ ծրագիր, սեփականաշնորհման մրցույթ կհայտարարվի, որտեղ կմատնանշվեն այն պայմանները, որ մենք կներկայացնենք մրցույթի հնարավոր մասնակիցներին: Դա կլինի հրապարակային»: Իսկ «Հայկական ավիաուղիների» սեփականաշնորհման ժամկետները դեռ հստակ չեն, բայց Արմեն Դարբինյանը գտնում է, որ այս տարի առաջին քայլերը պետք է կատարվեն:

Ժակ Շիրակի այցը հետաձգվեց

Հունիսի 22-ի երեկոյան նախագահ Ռոբերտ Քոչարյանը հեռախոսազրույց է ունեցել Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի հետ, որի ընթացքում քննարկվել է հայ-ֆրանսիական հարաբերություններին վերաբերող հարցերի լայն շրջանակ: Հեռախոսազրույցի ընթացքում խոսվել է նաեւ Ժակ Շիրակի տարածաշրջան կատարելիք այցի մասին, նշվել է, որ այն որոշ ժամանակով հետաձգվում է: Զրուցակիցները պայմանավորվել են, որ առաջիկայում դիվանագիտական խողովակներով կճշտվի այցի ստույգ ժամկետը:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԱՄԼՈ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՇՈՒԿԱ

Ադրբեջանցիները Սադախլո են բերելու փչացած նրբերշիկի խմբաքանակ

ԼՂՀ Ազգ պետական վարչությունը հանդես է եկել հայտարարությամբ, որում ասված է. «ԱԱՊՎ տվյալներով Սադախլո առեւտրական շուկայում մոտ ժամանակներս հնարավոր է ստացվի օգտագործման համար ոչ պիտանի նրբերշիկի խմբաքանակ: ԱԱՊՎ տեղեկատվության համաձայն, ադրանքը շուկա են հանելու ադրբեջանցի առեւտրականները: Բոլոր անձինք, ովքեր զբաղվում են Սադախլոյից ԼՂՀ եւ ՀՀ բերվող սննդամթերքի իրացմամբ, պետք է նկատի ունենան վերոհիշյալ հանգամանքը եւ թույլ չտան փչացած մթերքի մուտքը հայկական շուկաներ»: ԼՂՀ կառավարության որոշմամբ, հանրապետության հակահամաճարակային ծառայությունը ներկայումս զբաղվում է ԼՂՀ մուտք գործող սննդամթերքի ստուգմամբ:

Հուլիսի 1-ից կարգելվի չդրոշմավորված ենթաակցիզային ապրանքների ներմուծումը

ԵՐԵՎԱՆ, 24 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հուլիսի 1-ից ակցիզային դրոշմանիշերով չդրոշմավորված ենթաակցիզային ապրանքների ներմուծումը ՀՀ արգելվելու է: Այս մասին հայտնեցին ՀՀ մաքսային վարչությունում, նշելով, որ արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվող գործարարները պետք է համապատասխան փոփոխություններ մտցնեն իրենց գործարար ծրագրերում եւ Հայաստան ներմուծեն միայն դրոշմավորված ապրանքներ:

ԳՈՐԾԸՆԹԱՑ

Ազգային ժողովն ավելի մեծ իրավունքներ կունենա

Սահմանադրական հանձնաժողովն ընդլայնվում է

Որքան բացասական է ներկա Ազգային ժողովի հանդեպ գործադիր իշխանության վերաբերմունքը, նույնքան դրական է ապագա արհեստավարժ խորհրդարանի նկատմամբ առկա տրամադրվածությունը: ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը սահմանադրական փոփոխությունների հանձնաժողովին է ուղարկել իր առաջարկների ծավալուն փաթեթը, ուր առանձին տեղ է տրված նոր Ազգային ժողովի իրավասությունների բարձրացմանը: Ռոբերտ Քոչարյանն առաջարկում է, ի հաշիվ նախագահի լիազորությունների սահմանափակման, բարձրացնել օրենսդիր մարմնի լիազորությունները: Այդ առաջարկությունների համաձայն՝ ա) հանրապետության նախագահն այլեւս իրավասու չի լինելու գրել խորհրդարանը, բ) խորհրդարանը իրավունք է ունենալու անվստահություն հայտնել ոչ միայն ամբողջ կառավարությանը, այլեւ առանձին նախարարների, գ) նախագահին անվստահություն հայտնելու հոդվածները եւս պետք է ճշգրտումների ենթարկվեն:

Նախագահ Քոչարյանը նաեւ հրամանագիր է ստորագրել ընդլայնելու իրեն առընթեր Սահմանադրական փոփոխություններ նախապատրաստող հանձնաժողովի կազմը: Ըստ այդմ հանձնաժողովի աշխատանքներում այսուհետ մասնակցելու է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արմեն Խաչատուրյանը, ՀՀ Ազգ պատգամավոր Արմեն Մարտիրոսյանը, որ ներկայացնում է «Բարեփոխումներ» խորհրդարանական խումբը, այսինքն՝ ֆինանսատնտեսական շրջանակները, եւ Դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչը: Հայաստանյան քաղաքական հիմնական կուսակցությունների ներկայությունը, այսպիսով, հանձնաժողովում ամբողջանում է, թեեւ դեռ պարզ չէ նորաստեղծ Հայաստանի ժողովրդական կուսակցության մասնակցության խնդիրը, կուսակցության ղեկավար Կարեն Դեմիրճյանը նման նախաձեռնություն չի ցուցաբերում, անհրաժեշտ է ՀԺԿ-ի ձգտումն իրոք մասնակցելու պետական-քաղաքական կյանքին, որին էլ կհետեւի Ռոբերտ Քոչարյանի վերաբերմունքը:

Ն. Դ.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՍԿԵՓԱԿ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

ՀՌԱԿ-ը միշտ եղել է կառուցողական ընդդիմություն

Կա՞ այսօր ընդդիմություն, ի՞նչ դիրքորոշում ունի ՀՌԱԿ-ը: Խնդրեցինք իր տեսակետն արտահայտել ՀՌԱԿ Վանաձորի «Ղեւոնդ Խանջյան» նորաբաց ակումբի ատենապետ Գայանե Գասպարյանին:

«Ընդդիմությունը դեռեւս չի կազմավորվել, ասաց նա եւ ավելացրեց, պարզից էլ պարզ է, որ առաջին հերթին ընդդիմության շարքերում կլինեն այն կուսակցությունները, որոնց ներկայացուցիչներն այսօր չկան կառավարման օղակներում, իհարկե, նաեւ նրանց, ովքեր այս անգամ չկարողացան կիսառել ֆենանի իրենց ավանդական մեթոդները: Բոլոր դեպքերում, ընդդիմությունը խիստ անհրաժեշտ է եւ որքան շուտ կայանա, այնքան արդյունավետ կաշխատի հանրապետության կառավարման համակարգը: Ինչ վերաբերում է մեր կուսակցությանը, ՀՌԱԿ-ը միշտ եղել է կառուցողական ընդդիմության շարքերում, սատարելով հայոց պետականության կայացմանն ու ամրապնդմանը»:

«Երկրապահի» եւ «Հանրապետականի» միավորումն օրերի խնդիր է

«Հանրապետական» կուսակցության նախագահ Անդրանիկ Մարգարյանն «Ազգին» հայտնեց, որ «Երկրապահ» կամավորական միության եւ «Հանրապետական» կուսակցության միավորման խնդիրն արդեն շահագրգիռ ընթացքի է, եւ շուտով «Երկրապահը» կմիավորվի այս կուսակցությանը՝ դառնալով նոր խորհրդարանական ընտրություններում որոշիչ ուժ: «Երկրապահի» եւ «Հանրապետականի» միավորումը բացատրվում է ոչ միայն գաղափարական, այլեւ կադրային հարազատությամբ: Այսպես «Հանրապետական» կուսակցության անդամ եւ «Հրազդան» մարզադաշտի տնօրեն Ասոն Աղաբաբյանը «Երկրապահ» կամավորական միության վարչության անդամն է, պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի մերձավորը: Հիշենք՝ «Հանրապետական» կուսակցության անունը ժամանակին գայթակղության քար է եղել՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի, ինչպես նաեւ Վանո Սիրադեղյանի համար, որոնք ցանկանում էին այս անվամբ կոչել նոր եւ հզոր աջ կուսակցությունը՝ ի տարբերություն Հայոց համազգային շարժում արժեզրկվող անվան: Այսպիսով, խորհրդարանում ընտրական օրենսգիրքն ընդունելու ամենամեծ խոչընդոտը՝ համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերի հարաբերակցությունը կարող է լուծում գտնել հօգուտ համամասնական, այսինքն՝ կուսակցական ցուցակով ընտրված պատգամավորների: «Երկրապահներն» արդեն անհաստատ չեն լինի, այլ կուսակցականներ: Բայց «Հանրապետականները» ընդգծում են, որ միացումը կայանալու է «Երկրապահ» կամավորական միության, եւ ոչ այնքան Աժ «Երկրապահ» խմբի հետ: Դավանափոխներին՝ «Հանրապետությունից» «Երկրապահ» անցածներին, չեն վստահում:

Ն. Պ.

Հայտարարություն

1992 թ. հունիսին Արցախի Մարտակերտի շրջանում մարտական գործողությունների ժամանակ «Արաբո», Արմավիրի երկրապահ եւ «Զեյթուն» ջոկատների անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի օրվան նվիրված միջոցառման կապակցությամբ, հունիսի 28-ին, ժամը 10-ին երիտասարդական մետրոյի մոտից դեպի Եռաբլուր պանթեոն են շարժվելու ՀՀ ՊՆ ավտոբուսները: Ավտոբուսները միջանկյալ կանգառներ կունենան Արցախի պողոտայի եւ Արին Բերդի փողոցի հատման մասում՝ կամրջի մոտ եւ Գարեգին Նժդեհի հրապարակում:

ՀՀ ՊՆ լրատվության եւ հարաբերությունների վարչություն

ԱՍՈՒԼԻՍ

Փախստականների հարցերը՝ ժնեւյան համաժողովում

Հունիսի 15-18-ը Ժնեւում հերթական (երրորդ) ամենամյա հանդիպումն էր հրավիրել միգրացիայի եւ փախստականների հարցերով ԱՊՀ տարածաշրջանային համաժողովը, որին մասնակցում էին ԱՊՀ 157 հասարակական կազմակերպություններ: Քննարկման առարկան փախստականների բազում հիմնախնդիրների շարքն էր, 1996 թ. «հիմնադիր» հանդիպման ընթացքում ընդունված գործողության ծրագրի ընթացքում, որի ժամկետն սպառվում է 2000 թ.-ին: Ինչպես երեկ հրավիրված մամուլի ասուլիսում լրագրողներին տեղեկացրեց հայկական սոցիոլոգիական ընկերակցության նախագահ Գեւորգ Պողոսյանը, նշված կազմակերպությունից զատ համաժողովում ներկայացված էին փախստականների հարցերով զբաղվող եւս 6 կազմակերպություններ (վերջիններիս թիվը 30 է, որոնցից 12-ը հավատարմագրված էին, սակայն ոչ բոլորն էին միջոցներ հայթայթել համաժողովին մասնակցելու համար): Դրամական պատնեշը հաղթահարել եւ, ըստ այդմ, Ժնեւ էին մեկնել Գեւորգ Պողոսյանը, Հռիփսիմե Կիրակոսյանը («Առաքելություն Հայաստանին»), Վլադիմիր Կարմիրշլյանը (Ժողովրդավարության եւ մարդու իրավունքների ազգային կենտրոն), Գրետա Միրզոյանը («Զինվորի մայր»), Ռոբերտ Մելիք-Փաշաեւը («Վերադարձ Հայք») եւ Լարիսա Ալավերդյանը («Պատանդների պաշտպանության ֆոնդ»):

Համաժողովին առաջին անգամ մասնակցել եւ, ինչպես հավաստեցին ասուլիսին ներկա ՀԿ-ների ղեկավարները, բովանդակալից ելույթով եւ հայտարարությամբ հանդես էր եկել ՀՀ կառավարական պատվիրակությունը (հատուկ հանձնարարությունների գծով դեսպան Ասոն Մելիք-Շահնազարով, փախստականների վարչության պետ Մեխակ Գաբրիելյան եւ միգրացիայի ծառայության պետ Արգամ Պապոյան), ինչն ինքնին դրական գնահատվեց ՀԿ-ների ջանքերին պետականորեն սատարելու նախաձեռնությունով (այդ տեսակետից կարեւորվեց ՀՀ ԱԳՆ կազմակերպական աշխատանքը):

Հունիսի 15-ին եւ 16-ին աշխատանքները ծավալվել են 4 աշխատանքային հանձնախմբերում, 17-ին եւ 18-ին քննարկումները շարունակվել են ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի միգրացիայի միջազգային կազմակերպության, ԵԱՀԿ համատեղ նախագահությամբ, որին մասնակցել են կառավարական եւ ոչ կառավարական կազմակերպությունները, ինչպես նաեւ միջազգային նվիրատու (դոնոր) կազմակերպություններ (վերջիններիս թիվը, ասուլիսի մասնակիցների վկայությամբ, նվազելու միտում ունի): Հայկական կողմին հաջողվել է ստանալ ադրբեջանական կողմի ապատեղեկատվական շեշտադրումները, մասնավորապես ադրբեջանցի փախստականների, իբր, իրենց ծննդավայրը (Հորադիզ ավան) վերադառնալու «փաստի» առթիվ: Մեր ՀԿ-ների տեղեկատվական նյութերը ներկայացվել են 3 սեղանի վրա, մինչ ադրբեջանական կողմը ներկայացվել է մեկով, իսկ վրացական կողմն առհասարակ չի ներկայացվել: Ցուցադրվել է տեսաժապավեն Ադրբեջանից բռնագաղթածներին վերաբերող բազմաբնույթ տեղեկություններով:

Լ. Պ.

ԱՅՑ

Լուիզ Մանուկյանը Գյումրիում



ԳՅՈՒՄՐԻ, 24 ՀՈՒՆԻՍ, ԱՐՍԵՆ ՊՐԵՍ: Գյումրի այցելողների մեջ այսօր սպասված հյուր կար, որի ղեկավարած կազմակերպության բարեհաճ աջակցությամբ, քաղաքում բազմաթիվ ծրագրեր են իրականացվել: Ամեն անգամվա նման Լուիզ Մանուկյանը այցելեց Ալեք Մանուկյան փողոց, ուր ՀԲԸՄ-ի ֆինանսական միջոցներով վերականգնվում է վթարային կառույց, որը տրամադրվելու է դպրոցին: Կրթօջախն այս տարի արդեն պետք է ընդունի աշակերտներին:

ՀԲԸՄ-ն աջակցել է նաեւ արվեստի ինստիտուտի շինարարությանը, որի գործունեությանը ծանոթանալուց հետո, Շիրակի մարզպետի ուղեկցությամբ, Լուիզ Մանուկյանը եղավ երկու վթարային շենքերում, որոնց վերականգնումը օրախնդիր է եւ լուրջ ներդրում կլինի դպրոցաշինության ասպարեզում:

Նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց դպրոցաշինության ծրագիրը հոգաբարձուների խորհրդին ներկայացնելու մասին:

Այնպիսի զգացում ունեմ, թե սա Քոչարյանի վերջին այցը չէ

Առաջին անգամ ժամանելով Հայաստան կիրակի օրը, հունիսի 21-ին, Ֆրեզնոյաբնակ բարեբար Քրիս Քոչարյանը ցանկություն հայտնեց ծանոթանալու իր նախնիների հայրենիքին եւ գնահատել այնտեղ տիրող պայմանները: Քանի որ այցն անձնական բնույթ էր կրում, նա ցանկացավ, որ հնարավորինս քիչ ուշադրություն դարձվի իր անձին: Այդ էր պատճառը, որ նա վերջին պահին էր տեղեկացրել հայկական իշխանություններին իր անակնկալ այցի մասին եւ պահանջել նվազագույն պաշտոնականություն: Այնուամենայնիվ, հարգանքի արժանի տուրք մատուցելու համար նրա տարիների նվիրվածությանն ու առատաձեռն օժանդակությանը, Հայաստանի նախագահը, վարչապետն ու արտգործնախարարն անձամբ ներկա էին «Զվարթնոց» օդանավակայանում, երբ նրա անձնական ինքնաթիռը վայրէջք կատարեց:

Կարճատեւ հանգստից հետո, նախագահ Քոչարյանը նրան հակիրճ տեղեկացրեց Հայաստանի եւ նրա՝ շուրջ կատարվող զարգացումների մասին եւ քննարկեց երկրի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները: Ցանկանալով տեսնել հասարակ ժողովրդին եւ հանդիպել նրա հետ, հարգարժան հյուրը երջեց Հանրապետության հրապարակում եւ անհատական հյուրասիրության փոխարեն նախընտրեց ճաշել մի ռեստորանում, որտեղ տեղացի այլ անձնավորություններ էլ կլինեին: Ընթրելով երաժշտությունը, նա ռեստորանից դուրս գալուց առաջ անձամբ շնորհավորեց երաժիշտներին եւ երգիչներին: Չափազանց հուզմունքից հետո նրանք ասացին, որ ինչպես ՀՊ-ն զերծ լինի որեւէ քաղաքական ազդեցությունից հաշվետու լինի ընտրվի մարմիններին Աժ-ին եւ հանրապետության նախագահին, իսկ ամենակարեւորը՝ աշխատի հրապարակային:

ՀՊ-ն արդեն ավարտել է կենսաթոշակային հիմնադրամի, մեծածախ շուկայի վարկային ծրագրի, ինչպես նաեւ պետպատվերի արդյունավետությունը Հայաստանի ազգային հեռուստատեսությունում առդիսը, որի արդյունքները շուտով կներկայացվեն Ազգային ժողովին: Ի պատասխան լրագրողների դիտողության՝ Ասոն Թավադյանը համաձայնեց, «Վերահսկողությունը չպետք է ետ ընկնի գումարների ծախսումներից»: Այսինքն ՀՊ-ն եւ օրենսդիր իշխանությունը չպետք է բավարարվեն անցյալի սխալների ուշացած բացահայտմամբ, կարեւորը նոր սխալների բացառումն է:

Անցյալ սեփականաշնորհման պերճանքն ու թշվառությունը...

Սկիզբը էջ 1

Կասկածահարույց սեփականաշնորհման օրինակներից է նաեւ Երեւանի հրուշակեղենի եւ կարամելի կոմբինատը, որը վաճառվել է 9000 վաուչերով, Երեւանի պահածոների գործարանը՝ 4000 վաուչեր (Երեւանի գործարանի պահածոներն իսպառ անհետացան), Լարերի եւ լարերի գործարանը, «Նարեկ» կարի ֆաբրիկան: Ասոն Թավադյանն ամփոփեց. «Վերահսկիչ պալատի խնդիրն ավարտվում է առկա խախտումների արձանագրմամբ, եթե գնանք այլ ճանապարհով, կդառնանք քաղաքական գործիչներ»: Ավելացնենք, որ սեփականաշնորհման նախկին նախարար Նորայր Խաչատրյանը ժամանակին համաձայն էր Ասոն Թավադյանի այս պնդմանը: ԲԲԸ եղանակով սեփականաշնորհելիս անթույլատրելի էր կանոնադրական հիմնադրամի նվազեցումը թերբաժանորդագրության հետեւանքով: Տնտեսական եւ կառուցվածքային բարեփոխումների նախարար Վահրամ Ավանեսյանը, որն այն ժամանակ էկոնոմիկայի նախարարն էր եւ սեփականաշնորհման պատասխանատուն, խախտումների փաստ այստեղ չի տեսնում: Կառավարության վերջերս կայացած նիստում, նշեց պրն Թավադյանը, վարչապետ Արմեն Դարբինյանը համաձայնել է ՀՊ դիրքորոշմանը, բայց Վահրամ Ավանեսյանը ավելի ուշ հակառակ բացատրություններ է տվել:

«Ֆեմիդա», հայեցի հնչմամբ «Թեմիս» կազմակերպության հրավիրած մամուլի ասուլիսում ՀՊ նախագահ Ասոն Թավադյանը ասաց. «ՀՊ-ն դատավճիռներ չի կայացնում»: Բայց նա հույս ուներ, թե «Վերահսկիչ պալատի մասին» օրենքի փոփոխությունները թույլ կտան իր պալատը դարձնել անկախ թե գործունեության ծրագրման, թե ֆինանսավորման տեսանկյունից, որպեսզի ՀՊ-ն զերծ լինի որեւէ քաղաքական ազդեցությունից հաշվետու լինի ընտրվի մարմիններին Աժ-ին եւ հանրապետության նախագահին, իսկ ամենակարեւորը՝ աշխատի հրապարակային:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագրություն
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԼԵՔՍԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրենություն / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh
Համակարգչային շարվածք «Ազգ» թերթի
Նյութը «Ազգին» պարտադիր է
Պիտերը չեն գրախօսում ու չեն վերադարձնում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

Առաջին փուլում՝ տարբերակված վճարումներ

Ջրամատակարարման կնճռոտ խնդրում բնակչության եւ ԱԺ դաշտամավորների շրջանում առկա բազմաթիվ մտահոգություններին, մասնավորապես բազմամսահոգ Արշակ Սադոյանի հանրածանոթ «մեղադրանքներին» արձագանքելով, երեկ լրագրողներին հանդիպման էր հրավիրել Քաղաքաշինության նախարարության կոմունալ քաղաքականության վարչության պետ Արշակ Նազարյանը: Ասուլիսի մենախոսը (բերեմ. ինքնադարացման կարգով) ջրամատակարարող անհաջող հարաբերություններում առկա դժվարությունները եւ դրանց հաղթահարման հնարավոր ուղիները ներկայացնելիս էր: Ջրամատակարարման վիճակն իսկապես վատ է. տեղ-տեղ անմխիթար, բազմաբնակարանոց շենքերի բնակիչներից շատերը զրկված են հոսող ջրից, մայիսին Աղարանում ջրի աղտոտվածության հետ կապված հիվանդությունների դեպքեր են գրանցվել, համաձայնեց, որն Նազարյանը հիշեցնելով, սակայն, ջրամատակարարման համակարգի անբարենկարգ վիճակը, տարիներ շարունակ չնորոգվող, 70-80 տոկոսով մաշված ջրագծերում ջրի հսկայական կորուստները, որոնց գումարվում են շենքերի, հանրաղացոյա ջուրն անտեղի շռայլող բնակիչների անխնամ վերաբերմունքի, փչացած ծորակների եւ սանհանգույցների պատճառով առկա անտեղի կորուստները, որոնց հետեւանքով կենարար հեղուկը չի հասնում շատ ուրիշների: Ըստ հաշվարկների, ծորակի մեկ լուցկու տրամաչափի ճեղքը ժամում 30 լ ջուր է խլում ջրամատակարարման համակարգից: Անհավասարաչափ պայմաններում են շենքերի ցածր եւ բարձր հարկերի բնակիչները, որոնցից զանձվում է նույն նորմատիվային փաստաթղթերով յուրաքանչյուր շնչի համար նախատեսված 200 (Երեւանում՝ 250) լիտր ջրի գինը՝ 450 դրամ, արդարացի դժգոհությունների առիթ տալով: Ըստ այդմ, կառավարությունը ներկայացվել եւ հավանության է արժանացել ջրահաշվառման նոր ծրագիրը, որ նախատեսվում է վերանայել սակագնային նորմատիվները ըստ հարկերի տարբերակված վճարումներ ներմուծելու նպատակով (ծախսվող ջրի նորմատիվային ցուցանիշը բազմաբնակարանում է համապատասխան գործակիցներով՝ առաջին հարկերում 1.5-2, բարձր հարկերում էականորեն պակաս):

Սա ջրամատակարարման հիմնահարցի լուծման առաջին փուլն է, որ միայն մասնակիորեն է կարգավորում խնդիրը: Արմատական մոտեցումը, սակայն, քաղաքակիրթ աշխարհում ընդունված եւ արդարացված ջրաչափիչների օգտագործումն է, որ խոշոր դրամական ներդրումներ է պահանջում: 16-18 հազար դրամանոց ջրաչափիչների տեղադրումը, որին բնակչությունն առայժմ նյութապես պատրաստ չէ, զգալիորեն կրճատեցնի բաժանորդի վճարը, բնակիչը կմուծի ոչ թե որքան, այլ իր ծախսած ջրի դիմաց եւ, որ կարեւոր է, խնայողաբար կօգտագործի այն: Պրն Նազարյանի կարծիքով, ջրաչափիչների օգտագործման դեպքում ջրի աղտոտումը կդադարի առնվազն 30 տոկոսով: Դիտարկվում է ջրային հաշվիչների տեղադրման ծախսերն ասիճանաբար (2 տարվա ընթացքում) մուծելու հնարավորությունը: Ջրային հաշվիչներ ձեռք բերելու, ինչպես նաեւ տեղում արտադրություն կազմակերպելու վերաբերյալ բանակցություններ են ընթանում ֆրանսիական «Շլյումբերժե» ֆիրմայի հետ: Ջրաչափիչների տեղադրման աշխատանքներ սկսված են Աբովյանում եւ Լեռնային Ղարաբաղում, որի կառավարությունն, առաջ ընկնելով մեզանից, ներմուծել է 110 հազար դոլարի ջրաչափիչներ:

Նախնական տվյալներով ծրագիրը նախատեսվում է իրագործել 3 փուլով՝ առաջին փուլում (մինչեւ 2000 թ.) ջրաչափիչներ տեղադրել մագիստրալային գծերում եւ առանձնատներում, երկրորդ փուլում (մինչեւ 2002 թ.) բնակարաններում, կամավոր հիմունքներով, երրորդ փուլում (մինչեւ 2003 թ.) անցնել քարային համակարգի օգտագործման: Պրն Նազարյանն, անդրադառնալով չվճարումների դեմքում ջրամատակարարումն առանձին բնակարաններում դադարեցնելու հնարավորությանը, չբացառեց «հաշվիչային ահաբեկչությունների» տարածումը, լրագրողներն իրենց հերթին ոգեւորիչ վտանգների շարքում հիշատակեցին «ջրի մաղկանց» հնարավոր մեխանիզմները:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ



ՄԱՄՈՒԼ

Շիրակի ԶԼՄ-ները՝ օգնության կարոտ

ԳՅՈՒՄՐԻ 24 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. ՀՀ տեղեկատվության եւ զրահրատարակչության վարչության պետ Հարություն Կարապետյանի առաջին հանդիպումը տարածաշրջանային ԶԼՄ-ների հետ սկսվեց Շիրակի մարզից: Նա եւ պետի տեղակալ Անահիտ Թարխանյանը ծանոթացան Գյումրիում գործող պետական «Շիրակ», մասնավոր «Ցայգ» եւ «Շանթ» հեռուստաընկերությունների գործունեությանը, տեխնիկական հագեցվածությանը եւ հիմնահարցերին:

Մարզպետի մոտ հրավիրված խորհրդակցությանը մասնակցում էին թերթերի, ռադիոհեռուստատեսության եւ զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչներ, որոնք խոսեցին տուկայական հարաբերությունների պայմաններում անկախ լրատվամիջոցների գոյատեւման, իրրեւ պետության կողմից աջակցություն որոշ հարկերից ազատելու եւ այլ հարցերի շուրջ:

Կարեւորվեց ռադիոցանցի անմխիթար վիճակը, քանզի ապեից հետո այն չի վերականգնվել եւ կա ընդամենը 350 ռադիոկետ:

Հանգամանորեն պատասխանելով ներկաների հարցերին, Հարություն Կարապետյանը նշեց, որ խնդիր որդեգրել են Հայաստանում միասնական լրատվական դաշտի ձեւավորման ուղին:

Խոսվեց նաեւ ապեի 10-րդ տարելիցն արժանիորեն նշելու, երկրաշարժի գոտու հիմնախնդիրները օպերատիվ լուսաբանելու մասին:

«ԼՂ Հանրապետություն» թերթը 75 տարեկան է

Հունիսի 16-ին լրացավ ԼՂ ԱԺ պատգամավոր «ԼՂ Հանրապետության» 75-ամյակը: Թերթը լույս է տեսնում 1923 թ. հունիսի 16-ից: 1988-95 թթ. թերթի գլխավոր խմբագրի պաշտոնը զբաղեցնում էր ներկայիս խմբագիր, գրող ու հրապարակախոս Մաքսիմ Հովհաննիսյանը: 95 թ. գլխավոր խմբագրի պաշտոնն է զբաղեցնում շնորհալի լրագրող Գեղամ Բաղդասարյանը, որից հետո ղեկավարի պաշտոնը նորից ստանձնեց Հովհաննիսյանը: Փոխ, տասնակոս էր նախկին «Խորհրդային Ղարաբաղի» անցած ճանապարհը, հասկանալի սաֆոնովյան ռեժիմի օրոք, երբ հայանպաստ ցանկացած հոդվածի հրապարակում ավարտվում էր լրագրողների ձերբակալություններով, գիշերային խուզարկություններով ու ծեծկռտուքներով, հյուծիչ հարցաքննություններով ու դատավարություններով, հսկայական տուգանքներով ու պատժամիջոցներով: Որպես ականատես ու թերթի նախկին աշխատակից կարող եմ հավաստել, որ թերթը պատվով դուրս եկավ բոլոր փորձություններից, չկոտրվեց, չկորցրեց ազգային նկարագիրը, չնայած անընդունելի հետաքննություններին շարունակեց պայքարել ազատ խորհրդային գաղութատիրության դեմ: Պատահական չէ, որ շարժման առաջին օրերին խմբագրության շենքը վերածվել էր իսկական շտաբի, որտեղ ակտիվիստների խումբը քննարկում ու մշակում էր հետագա գործողությունների ծրագիրը:

Այսօր թերթը կանգնած է այլ հիմնախնդիրների, հիմնականում տնտեսական բնույթի դժվարությունների առաջ, սակայն չնայած դրանց թերթը շարունակում է լույս տեսնել՝ ընթերցողներին ծանոթացնելով ԼՂՀ-ում, աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին:

Այս օրերին խմբագրակազմը տնում է թերթի 75-ամյակը: Սրտանց շնորհավորում ենք մեր գործընկերներին հիշարժան տարեդարձի կապակցությամբ, մաղթում ստեղծագործական հաջողություններ, անկոտրում կամք ազգային իղձերի ու ԼՂՀ անկախության գաղափարների քարոզչության գործում:

Ա. Ա.

Նաիրա Մելքումյանը դեմ է ազատ մամուլի գոյությանը

Հունիսի 23-ին ԼՂՀ ԱԳՆ-ում արտգործնախարար Նաիրա Մելքումյանը հանդիպեց Ղարաբաղի լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ: Հանդիպման առիթ է հանդիսացել օրերս «Հայաստանի Հանրապետություն» թերթում տպագրված «Ատոմն էլ լսող է պետք» Գ. Բաղդասարյանի հոդվածը, որտեղ հեղինակը «ծամարձակվել է» քննադատել Եվրախորհրդի՝ Ադրբեջանի գծով զեկուցող Ժակ Բոմելի հակաղարաբաղյան տեսակետները ու կեցվածքը: Ի զարմանս բոլոր լրագրողների՝ նախարարը ներկաներին հրաժարեցրեց բառացիորեն հետեւյալ հայտարարությամբ. «Այստեղ ես եմ որոշելու, թե ինչն է ճիշտ, ինչն է սխալ: Ես ինքս ուղղություն կտամ հրապարակումներին»:

Պատասխանելով սեփական տեսակետն արտահայտելու մեր գործընկերոջ՝ մամուլի մասին օրենքով սահմանված իրավունքը, տողերիս հեղինակը եւ մի շարք լրագրողներ արտգործնախարարին հիշեցրին ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի այն հայտարարությունը, որ ոչ ոք իրավունք չունի խոչընդոտելու լրագրողների գործունեությունը, խոսքի, մամուլի ազատությունը ԼՂՀ-ում: Նախագահը կոչ էր արել բոլոր իշխանավորներին բարենպաստ պայմաններ ստեղծել լրագրողների ազատ գործունեության համար: Այս առնչությամբ ստեղծված սարսափելի է Մելքումյանի փորձը՝ կառավարելի դարձնել Հայաստանի մի շարք թերթեր եւ գործակալություններ: Լրագրողները նրան հիշեցրին նաեւ, որ 6 տարի առաջ ոմանք նույնպես փորձում էին տիրապետությանական ուղղություն տալ Ղարաբաղին առնչվող հրապարակումներին, ինչին հետեւեց նախարարի աղաղակող պատասխանը. «Լեւոն Տեր-Պետրոսյանը ճիշտ էր այն օրերին»: «Խոսքը Մարտակերտի եւ Շահումյանի անկա՞ն մասին է», մեր երկրորդ հարցին ի պատասխան վերջնականապես նյարդայնացած նախարարն ընդգծեց, որ ինքն անձամբ դեմ է ազատ մամուլի գոյությանը եւ տվարտից հանդիպումը:

ՎԱՀՐԱՄ ԱՂԱՅԱՆՅԱՆ

Նախարարը փակելու է «Մարզական Հայաստան» թերթը՝ նոր պարբերական բացելու պայմանով

ԵՐԵՎԱՆ, 24 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարար Ռոլանդ Շառոյանը Արմենպրեսի թղթակցի հետ Ազգային գրադարանում ունեցած զրույցի ժամանակ ասաց, թե մտադիր է փակել «Մարզական Հայաստան» թերթը՝ նոր մարզամշակութային պարբերական բացելու պայմանով: «Ես ընդհանրապես կողմ չեմ թերթ փակելուն, սակայն հիշատակված մամուլն այդ որակով չպետք է լույս տեսնի», ասել է նախարարը:

Հնչակյան «Երիտասարդ Հայաստանը» կտպագրվի Երեւանում

ԵՐԵՎԱՆ, 24 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Սոցիալ Դեմոկրատ Հնչակյան կուսակցության «Երիտասարդ Հայաստան» թերթը, որը ներկայումս հրատարակվում է Նյու Ջերսիի նահանգի Փարամուս քաղաքում (ԱՄՆ), տեղափոխվելու եւ հրատարակվելու է Երեւանում: Այս մասին իր առաջին համարի խմբագրականում տեղեկացնում է նույն կուսակցության ամսաթերթ «Հնչակյան լրատուն»: «Երիտասարդ Հայաստանի» առաջին համարը լույս է տեսել 1903 թվականին, Բոստոնում: Թերթի ներկայիս խմբագիրը ԱԴՀԿ կենտրոնական վարչության անդամ Արսեն Ճերեճյանն է, որն ադեն քառորդ դար է, ինչ իր ուսերի վրա է առել նրա հրատարակչական հոգսերը:

Օլեգ Եսայանն ընդունեց ԵԱՀԿ ներկայացուցչին

Հունիսի 23-ին ԼՂՀ ԱԺ նախագահ Օ. Եսայանն ընդունեց ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի դաշտային օգնական Վասիլ Իվաշկոյին վերջինիս խնդրանքով: Հյուրը, որ 3 ամիս աշխատում է տարածաշրջանում, ցանկություն հայտնեց իմանալ խորհրդարանի խոսնակի կարծիքը հանրապետության ներքին կյանքում տեղի ունեցող գործընթացների, ԱԺ օրենսդրական գործունեության եւ դարաբաղյան հիմնահարցի կարգավորման ուղղությամբ ձեռնարկվող քայլերի վերաբերյալ: ԼՂՀ ԱԺ նախագահը հյուրին ծանոթացրեց ԱԺ օրինաստեղծ աշխատանքին, մասնավորապես ներկայացնելով խորհրդարանի կողմից վերջերս ընդունված հանրապետության տնտեսական բարեփոխումներն առաջնորդող օրենքների փաթեթը: Հանդիպմանը ներկա էին ԼՂՀ փոխարտգործնախարար Վ. Աբրահամյանը, ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի փոխնախագահ Գ. Գրիգորյանը:

Հելսինկյան ընկերակցությունը պահանջում է օրինականության հաստատում իրավապահ համակարգում

ԵՐԵՎԱՆ, 24 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Այսօր Հելսինկյան ընկերակցության գրասենյակում տեղի ունեցավ մամուլի ասուլիս «Արդարադատությունը Հայաստանում» թեմայով, Գալուստ Գիլանյանի, Գագիկ եւ Գեւորգ Նիկողոսյանների եւ Մարինա Վարդանյանի մահվան վերաբերյալ քրեական գործի ոչ օբյեկտիվ դատաքննության մասին: ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություն Հելսինկյան ընկերակցությունը դիմումներ հղեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին եւ ՀՀ Գերագույն դատարանի նախագահ Տարիել Բարսեղյանին, որոնցում նշվում է, «Մենք պահանջում ենք ձեռք առնել համապատասխան միջոցներ իրավապահ մարմինների համակարգում օրինականության հաստատման եւ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար»: «Հակառակ դեպքում, նշեց միության նախագահ պարոն Դանիելյանը, մենք մեզ իրավունք ենք վերապահում տեղեկացնել միջազգային հանրությանը եւ հեղինակավոր ազդակիրներին ՀՀ-ում ժողովրդավարության բացակայության եւ մարդու իրավունքների կոպիտ խախտումների մասին»:

Խսովոր շոգ Հայաստանում

ԵՐԵՎԱՆ, 24 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Հայաստանում հունիսի համար անսովոր շոգ եղանակ է հաստատվել վերջին օրերին: Երեւանում, օրինակ, սնդիկի յունը կեսօրին սովորում հասնում է 38 աստիճանի: «Սովորաբար այդպիսի օրերը հատկանշական են ամենաշոգ ամիսների՝ հուլիսի եւ օգոստոսի համար, թղթակցին ասաց ՀՀ հիդրոօդերեւութաբանության վարչության պետ Գենադի Կոջոյանը: Ներկայիս եղանակային երեւույթները պայմանված են հարավից Արաբական անապատից եկող օդային հոսանքների հետ»:

digitised by A.R.A.R.@

ազգային

Հայաստանում 1991 թ. նախագահական ընտրություններից որոշ ժամանակ անց, ասես պարզ երկնքում ճայթած ամպրոպի տպավորություն թողեց նախագահի հայտարարությունը. «Ազգային գաղափարախոսությունը կեղծ կատեգորիա է»: Այնուհետեւ նրա նշանավոր թիմակից Ժիրայր Լիպարիտյանի «Մեր պատմության փառահեղ էջերն ու ողբերգությունները միֆալոգիա են»: Ավելին, հետեւեցին նախկին վարչապետի վայրիվերո «դատողությունները» ցեղասպանության վերաբերյալ: Ի՞նչ ընդհանուր բան կար այս մարդկանց հայտարարությունների մեջ: Միայն մերժողական վերաբերմունք, անսփոփ արհամարհանք հայ ժողովրդի նկատմամբ:

Ազգային գաղափարախոսությունը մեզանում բռնադատվեց Ավիս Նուրիջանյանի ժամանակներից: Թվում էր, թե նորանկախ Հայաստանի առաջին նախագահը ազգային գաղափարախոսության նոր ալիքով նվաճումների կառաջնորդի ժողովրդին: Ավա՜ղ, նախկին նախագահը մինչեւ վերջ պնդեց իրենը: Ավելին, արեց ամեն ինչ ասվածը գործնականում իրականացնելու համար: Բայց արդյո՞ք ազգային գաղափարախոսությունը կեղծ կատեգորիա է: Այս տեսակետից միշտ էլ ցանկացած միտք, քաղաքական հարց կարելի է մեկնաբանել տարբեր տեսանկյունից նաեւ նենգափոխել: Նախկին նախագահն ասում էր. «Ի՞նչ են հասկանում այդ մարդիկ ազգային գաղափարախոսության տակ: Մեկ բան ամբողջ ազգը պետք է ընդունի այդ գաղափարախոսությունը: Ամբողջ ազգը ընդունում է մեկ գաղափարախոսություն միայն տոտալիտար համակարգերում... իսկ եթե ժողովրդավարություն է, ապա ոչ ոք չի կարող պարտադրել որեւէ գաղափարախոսություն»: Ահա օրինակ, երբ անհատը, թեկուզ եւ նախագահ, իր հնարանքն է պարտադրում ազգին: «Ես այսպես եմ հասկանում», պնդում էր նա, ավելացնելով, որ իր համար «կոմունիստական, սոցիալ-դեմոկրատական, լիբերալ-դեմոկրատական, ազգայնական թե ծայրահեղ ազգայնական ազգային գաղափարախոսություններ են»: Բարեբախտաբար նման մտավարժանքները ավազի վրա են կառուցված: Ճագումով կորեացի Մունը «յոթ տարի սիբիրներում թրծվելուց, Գորբաչովի «վերակառուցման» մեջ գլխավոր քանդողներից մեկի պարականություններն ավարտելուց հետո ամերիկաներում սուպերմիլիոնատեր դարձավ... այս կորեացին իր գաղափարները տարածելու համար ողջ աշխարհը հեղեղել է գործակալներով, ունի իր ագենտուրան, միլիոններ է ծախսում հոգեորության համար»:

Կհրամայեք մունի՞զմը եւս ազգային գաղափարախոսություն համարել: Նախկին նախագահը պնդում էր, որ ամբողջ ազգը մեկ գաղափարախոսություն (իմա՝ ազգային գաղափարախոսություն) ընդունում է միայն տոտալիտար համակարգերում: Եթե չմոռանանք, որ Խորհրդային Միությունը տոտալիտար համակարգ էր, ապա մնում է եզրակացնել, որ Խորհրդային Միությունը քարոզում էր ազգային գաղափարախոսություն: Եղա՞վ... իսկ ուր մնաց «պրոլետարիատի առաջնորդի» բանաձեւն այդ առթիվ. «Մարքսիզմն անհամատեղելի է ազգայնականության հետ, թեկուզ եւ ամենաարդար: Մարքսիզմն առաջ է քաշում... ինտերնացիոնալիզմ՝ բոլոր ազգերի միաձուլումը մի բարձր միասնականության մեջ»: (Լենին ԵՕ национальном и национально-колониальном вопросе Ж6 էջ 138): Ըստ նախկին նախագահի «...եթե ժողովրդավարություն է, ապա ոչ ոք չի կարող պարտադրել գաղափարախոսություն...»: Ուշադրություն դարձնենք. միտումնավոր հավասարության նշան է դրվում պարտադրվող գաղափարախոսությունների (ռասիզմ, ֆաշիզմ, կոմունիզմ, մաոիզմ) եւ ազգային գաղափարախոսության միջեւ: Ազգայինի պարագայում պարտադրանքի հարց չի լինում, քանի որ դա ազգի համընդհանուր կամքի արտահայտություն է, օտարածին չէ եւ կուսակցական պլատֆորմ չէ: Ճիշտ է, գաղափարախոսությունները ենթադրում են քաղաքական գործունեություն եւ վերջինս էլ անիմաստ է առանց գաղափարախոսության, այնուամենայնիվ ամեն գաղափարախոսություն ազգային դառնալ չի կարող: Ասված է հասարակական կյանքը մարդկանց գիտակցության մեջ անդրադառնում է բազմազան ձեւերով: Սա ընդհանրապես: Հայ հասարակական գիտակցությունն ունեցել է իր ուրույն բովանդակությունը, կազմված ազգային յուրահատուկ շահերի, ազգային նպատակների, սովորույթների, զգացումների հետ: Հայ հասարակության մեջ դարերի ընթացքում առաջ եկած բազմաբնույթ բարդ խնդիրներն ու նպատակները թելադրել են միասնական գաղափար ազգային գաղափարախոսություն: Պատահական չի ասված. «Հայը միշտ էլ հերոսագործում է, երբ նրա առաջնորդներին հաջողվում է համահավաք սիրտ ստեղծել», ինչպես դա եղավ 1988-89 թթ.: Նախկին նախագահն այն ժամանակ ազգային գաղափարախոսության առաջնորդ-կրողն էր, որն արտահայտվում էր ազգային ազատագրական պայքարի տեսքով: Սակայն բավական էր, որ նախագահը ժխտի ազգային գաղափարախոսությունը եւ դիմի գործնական քայլերի դրանից բխող հետեւանքներով, որպեսզի արդյունքում ստանա 1996 թ. պարտությունը: Ինչ վերաբերում է նախագահի ասածին «...եթե ազգին պարտադրվում է ազգային գաղափարախոսություն, դրանով խաչ ենք քաշում ժողովրդավարության վրա...», դա ընդամենը բառախաղ է: Ո՞ր ժողովրդավարության մասին է խոսքը: Ամենաթողտվությա՞ն:

Քաղաքական ազատությունից զրկված ժողովրդին գործողությունների ազատության մղելը հղի էր անցանկալի հետեւանքներով եւ անքննարկելի էր: Էլ չենք խոսում օրենքների իսպառ բացակայության, ժողովրդավարությանն անհրաժեշտ զարգացած մտածողության պարտադիր պայմանի մասին: Նախկին նախագահը չփորձեց շտկել, հեռու պահել մարդկանց ամենաթողտվության վտանգից, հակառակը՝ նպաստեց քաոսի ամբողջականացմանը: Ուրեմն բարձիթողի վիճակի ստեղծումը ուներ որոշակի նպատակամղվածություն: Վերին իշխանությանը ձեռնտու էր նման «ժողովրդավարությունը»: Սրան գումարվեց ՀՀՇ-ի վերածվելը կլանային կառույցի, եւ դիկտատուրայի նշանները ակնհայտ դարձան: Առաջ անցնելով լրացնենք, որ այսօր ՀՀՇ-կլանը, զրկված իշխանության լծակներից, ցանկացած խարդավանքի կդիմի ետ բերելու թալանի թագավորությունը:

Հայ մտավորական հասարակությունը չպետք է թույլ տա, որ այդ կազմավորումը նորից փորձության ենթարկի ժողովրդին: Հայտնի է, որ կտրված ծառը երկար ժամանակ կարող է կանգնած մնալ, նրան պետք է հրել:

Բայց դառնանք ժողովրդավարությանը: Մեր պետության կայացման ընթացքում ժողովրդավարությունը սերտորեն պետք է առնչվի ազգային պետության նպատակների եւ գաղափարախոսության հետ: Իսրայելի պետության ազգային գաղափարախոսությունը մեզ համար ընդունելի չէ, սակայն խորապես ազգային է: Զարմանալի չէ, որ նրանք պետության եւ ազգի շահերը նույնացնում են: Առավել զարմանալի է, որ Հայաստանի նախկին նախագահն իր երկրորդ երդման ժամանակ հատուկ շեշտեց. «Պետականությունը վեր դասել ազգայինից»: Ինչպես սկզբում նշվեց, սա պարզապես մերժողական կեցվածք է հայ ազգի նկատմամբ: Բուն էությամբ վտանգավոր հետեւանքներով այս գաղափարը մեռելածին է ու սերտ կապված ազգային գաղափարախոսության ժխտման հետ: Կարծում ենք բոլորի համար պարզ է, որ առաջնայինը ազգն է, իսկ պետությունը անհրաժեշտ եւ բավարար պայման՝ ազգին ծառայելու պարտադիր պայմանով: Եթե չկա ազգ, կամ այն ստորադաս է, ապա ո՞ւմ պետության մասին է խոսքը: Դժվար այսօր աշխարհում գտնվի պետություն, որ իրեն ազգային չկոչի: Նույնիսկ ԱՄՆ-ը, ազգերի այդ կոնգլոմերատը, իրեն ազգային պետություն է համարում: Միայն բոլշեւիկներն էին, որ «ձեւով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական» ազգակուլ կարգախոս ունեին:

Այնուհանդերձ ո՞ւր է տանում ազգային գաղափարախոսության մերժումը: Եթե փորձենք կողք-կողքի դասավորել վերջին հարյուրամյակում հայկական հարցում հայերի հակառակորդների որդեգրած մարտավարությունը, ապա կպարզվի, որ սկսած Թեոդոր Հերցլից ու Աբդուլ Համիդից մինչեւ Թալեաթ ու Սուսաֆա Քեմալ եւ Ստալինից մինչեւ գորբաչովյան երկրաշարժ, մի ուղղություն ունեին հարցի ուժային լուծում: Խորհրդային ռեժիմի փլուզումից հետո հայության հակառակորդներն իրենց համար հայտնագործեցին, որ դժվար, գուցե եւ անհնարին է հայերի եւ Հայաստանի հետ կապված խնդիրը լուծել ստանդարտ եղանակով: Նոր մոտեցումներ առաջ քաշվեցին, որոնց հիմքում ընկած է հայ ժողովրդի հոգեւոր էության չեզոքացումը, այսինքն ազգային ոգու, ազգային բնավորության, ազգայինի գիտակցության, ազգային հոգեբանության տարալուծումը, ոչնչացումը: Նման նպատակի հասնելու մեթոդներից է ժողովրդին սոցիալապես հոգեվարքի հասցնելը: Մեթոդը նոր չէ: Դեռեւս 1918 թ. ձմռանը Լենինը նոր ռեժիմը պարտադրեց Պետրոգրադի եւ Մոսկվայի բնակչությանը, սովի մատնելով նրան՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով: Իսկ հետեւանքները բազմաթիվ են: Վերջին յոթ տարիներին հայ մարդն իր մաշկի վրա զգաց իր բացարձակ անպաշտպանվածությունը: Ստեղծված սովի եւ խավարի պայմաններում սկսվեց Հայաստանի հայաթափումը եւ քանի որ երկրի անվտանգությունը պայմանավորվում է նրա ինտելեկտուալ ներուժով, հարվածն առաջին հերթին հասցվեց գիտության եւ կրթության ոլորտին: Բոլոր ստեղծագործ միությունները քայքայվեցին, պառակտվեցին: Առանձնապես դժվար բաժին հասավ ազգային գաղափարախոսության ծանր հրեանուն գրողների միությանը: Փորձեցին ջլատել հիմնական քաղաքական կուսակցությունները, կրկնորդներ ստեղծելով նրանց ի հակակշիռ, դասախաղեր սարքելով: Այս տարիները նշանավորվեցին բարոյական արժեքների աննախադեպ կորուստների ալիքով: Բարոյական հաղթանակները դարձրին ծաղրի առարկա, անտեղյակ լինելով, որ բարոյական հաղթանակ բնորոշ է բարձր բարոյականություն ապահովող հավատակությանը: Հավանաբար ապագա պատմաբանները գայթակղություն կունենան հայոց պատմության մեջ «շամիրամությունը» առանձնացնելու, որպես հայ կանանց քաղաքական կեղտոտ խաղերի մեջ ներքաշելու բացառիկ ժամանակաշրջան: Նախագահն իրեն շրջապատեց նաեւ այնպիսի անհատներով, որոնց մասին անվարան կարելի է ասել, որ նրանց բարոյական եւ մտավոր զարգացումը չէր համապատասխանում ոչ նրանց համբավին, ոչ հասարակության մեջ ունեցած դիրքին: Այո, ազգովին սխալվեցինք առաջին նախագահի հարցում... Որեւէ մեկը 1990 թ. կպատկերացնե՞ր, որ Հայաստանի նախագահը փորձելու է դաստաստան տեսնել սեփական ժողովրդի նկատմամբ, առանց ծանրութեթեւ անելու դաժանության եւ չարդարացված վճռականության հետեւանքները...

Ահա այս ամենը միասին կոչվում է ազգային գաղափարախոսության մերժում: Այսպիսի ճանապարհը տանում է մի պետության ստեղծման, որ փաստորեն իներտ կլիներ հիշողության նկատմամբ, ձեւականորեն անկախ, կկոչվեր «Հայաստան», բայց զուրկ կլիներ ազգային բովանդակությունից:

Ամփոփենք:

Վերջին մի քանի տարիներին բավական թանկ հոսեց ի պատմություն ազգային գաղափարախոսության: Որպես այդ գաղափարախոսության հիմք ընդունվում են մեծն Նժդեհի հայացքները՝ այսօրվա մոտեցումներով հանդերձ: Այդ հիմքի վրա կանգնած են մեր գաղափարախոսության սյուները՝ ազգային մշակույթ, ազգային պատմություն, ազգային դաստիարակություն, ազգային եկեղեցի: Այսօր հայ մտավորականությունը անհետաձգելի քայլեր պետք է անի, հետամուտ լինի իր ազգային գաղափարի քարոզչությանը եւ նրա սկզբունքային տարրերի ամրակայմանը հայոց կյանքի ոլորտներում:

ՌՈՒԲԵՆ ԲԱՂԱԼՅԱՆ

Ինչո՞ւ էր նախկին նախագահը ժխտում ազգային գաղափարախոսությունը

Ի ՀԻՇԱՏԱԿ

Վալերի Երվանդի Մարության

1998 թ. հունիսի 20-ին, ծանր ու տանջալից հիվանդությունից հետո, կյանքի 55-րդ տարում վախճանվեց ԼՂՀ պաշտպանության բանակի գլխավոր վիրաբույժ, բուժծառայության գնդապետ, բժշկական գիտությունների թեկնածու Վալերի Մարությանը: Կյանքից անժամանակ հեռացավ երկրի արժանապատիվ քաղաքացին, բոլորանվեր հայրենասերը, առաջնակարգ մասնագետը, մարդ, որ վայելում էր շրջապատի հարգանքը, գործընկերների եւ բոլոր ճանաչողների սերն ու ակնածանքը:

Վալերի Երվանդի Մարությանը ծնվել է 1943 թ. նոյեմբերի 3-ին, Շահումյանի շրջանի Հայկական Պարիս գյուղում: Ստեփանակերտի թիվ 3 միջն. դպրոցն ավարտելուց հետո, 1963 թ., ընդունվել է աշխատավոր երիտասարդության երեկոյան դպրոցը, այնուհետեւ ուսումը շարունակել Կրասնոյարսկի պետական բժշկական ինստիտուտում: Ուսանողական տարիներին անցել է ռազմադաշտային վիրաբուժության նախասիրական դասընթացներ: Ինստիտուտն ավարտելուց հետո աշխատել է Կրասնոյարսկի երկրամասային կլինիկական հիվանդանոցում: 1973 թ. վերադարձել է Ստեփանակերտ եւ որպես վիրաբույժ աշխատանքի անցել մարզային հիվանդանոցում, որտեղ

1987-ին ստացել է առաջին կարգի վիրաբույժի որակավորում եւ նույն թվականին նշանակվել հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքի վարիչ: 1984-ին գիտական թեզ է պաշտպանել իր իսկ գյուտի՝ մարդու վերջույթների արյունահոսության դադարեցման համար ստեղծած ինքնաշիր լարանի հիման վրա: 1991-ին նրան շնորհվել է բարձրագույն կարգի վիրաբույժի որակավորում:

Արցախի ազգային-ազատագրական շարժման սկզբից ի վեր ակտիվ գործիչներից էր, գլխավորել է ռազմական բուժծառայությունը թե՛ ընդհատակյա պայքարի, թե՛ մարտական գործողությունների ժամանակ: Եղել է գրեթե բոլոր խոշոր ռազմագործողությունների բժշկական ապահովման կազմակերպիչն ու մասնակիցը: ԼՂՀ պաշտպանության բանակի ստեղծման պահից (1992 թ.) ծառայության է անցել բանակում՝ որպես բժշկական ծառայության պետ, 1995-ին նշանակվել է ԼՂՀ ՊԲ-ի գլխավոր վիրաբույժ: 1996-ից մինչեւ կյանքի վերջին օրը ԼՂՀ ՊԲ N ռազմական հոսպիտալի պետն էր: Նա մեծ աշխատանքներ է ծավալել հոսպիտալն արդիական բուժսարքավորումներով, վիրակապական նյութերով, դեղամիջոցներով հագեցնելու, նոր բաժանմունքներն ստեղծելու, զինծառայողների բուժական գործի կազմակերպումն առավելագույնս բարելավելու ասպարեզում: Բավական է նշել, որ նրա ղեկավարության օրոք հոսպիտալում չի արձանագրվել բժշկական միջամտությանն առնչվող մահվան եւ ոչ մի դեպք:

Վալերի Մարությանն արցախյան բանակի բժշկական ծառայության եւ ռազմական առողջապահության հիմնադիրներից էր: Նրա անմիջական ղեկավարությամբ տեղակայված դաշտային հոսպիտալները հազարավոր մարտիկների կյանք են փրկել, որոնց 70 տոկոսից ավելին կրկին շարք է վերադարձել: Անուրանալիորեն մեծ է նրա ներդրումն արցախյան ազգային-ազատագրական պայքարում ձեռք բերված հաղթանակի բուժապահովման գործում:

Հեղինակել է «Պատերազմն ունի երկար հետք» փաստագրական գիրքը, որն ուշագրավ եւ հուզիչ պատում է արցախյան գոյամարտի փառքի եւ տառապանքի քառուղիների մասին, ոչ միայն զինվորների, այլեւ բուժաշխատողների կյանքի ու առողջության գնով նվաճած հաղթության մասին:

Նա ընտանիքի նվիրյալ հայր էր ու հոգատար պապ:

Վալերի Մարությանի, բազմահմուտ ու տրամաբան բժշկի, ազնիվ մարդու, օրինակելի քաղաքացու եւ հայրենասերի հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:

ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀ
ԼՂՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ԼՂՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մեր խորին ցավակցությունն ենք հայտնում մարտական ուղի անցած բժիշկ վիրաբույժ, Խոջալուի հոսպիտալի պետ, բուժծառայության գ-տ Մարության ընտանիքի անդամներին եւ հարազատներին՝

բժիշկ ՄԱՐՈՒԹՅԱՆԻ կյանքից հեռանալու կապակցությամբ:

ՀՀ ՊՆ Վ. Մարգսյան
ՀՀ ՃԻ ԳԾՊ Մ. Հարությունյան
ՀՀ ՊՆ Բուժ՝ ՎՊ անձնակազմ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ՖՐԱՆՍԻԱ

«Պեռնո-Ռիկարը» ընտանեկան ձեռնարկություն է

Ֆրանսիական «Էխոյրես» հանդեսից քաղած տեղեկություններ են ներկայացնում Երեւանի կոնյակի գործարանի գնորդի՝ ֆրանսիական «Պեռնո-Ռիկար» ընկերության վերաբերյալ:

1932 թ. Պոլ Լուի Մարիուս Ռիկարը 22 տարեկան էր, երբ սկսեց արտադրել իր հանրահայտ խմիչքը՝ անիսոնով լիկյորը, որի շնորհիվ միջազգային համբավ նվաճեց: Ներկայումս ամեն տարի թողարկվում է 90 միլիոն շիշ «Պեռնո-Ռիկար»: Արգակիցներին արագորեն դուրս մղելու նպատակով Պոլ Ռիկարը սկսեց արտադրել խացված խմիչք, որի մեկ բաժակին հարկավոր էր ավելացնել 5 բաժակ ջուր: Այսպիսով արդեն 30-ական թթ. մեկ շիշ «Ռիկարից» սպառվում էր մոտ 50 բաժակ խմիչք: Անշուշտ, սրճարանատերերը հաճույքով էին ընդունում եւ վաճառում այդ շահաբեր լիկյորը: Այդպիսով «Ռիկարը» ասպիճանաբար դուրս մղեց մրցակիցներին «Կազանիսին», «Պեռնոյին», «Բերժեին»: Բացի դրանից, համեմատաբար էժան «Ռիկարը» արագորեն սպառողներ գտավ բանվորների եւ ծառայողների միջավայրում: Նույնիսկ Հովհաննես 23-րդ պապը Վատիկանում 1961 թ. ընդունեց Պոլ Ռիկարին եւ օրհնեց նրա գործարանը:

1971 թ. Պոլ Ռիկարը սահմանազատվեց «Բեռնար» ֆիրմայից, որին կասկածում էին «Ռիկարի» բաժնետոմսերը նրա մրցակից «Պեռնոյին» կամ կանադական «Սիգրեմին» վաճառելու մտադրության մեջ: Իսկ 4 տարի անց «Ռիկարը» տիրացավ «Պեռնո» ֆիրմային, որից հետո հանրահայտ խմիչքի անվանումը փոխվեց, դառնալով «Պեռնո-Ռիկար»:

1978 թվականից ընկերությունը պաշտոնապես գլխավորում են Պոլ Ռիկարի որդին Պատրիկ Ռիկարը (նախագահ-գլխավոր տնօրեն) եւ գլխավոր տնօրեն Թիերի Ժակիյան, որն իր կնոջ կողմից կապված է «Պեռնո» ընտանիքի հետ: 1984 թ.



Պատրիկ Ռիկար

«Պեռնո-Ռիկարը» սկսեց արտադրել նաեւ ոչ ոգելից ըմպելիքներ, ձեռք բերելով նարնջահյութ թողարկող «Օրանժինա» ֆիրման: Երեք տարի անց իոլանդական «Այրիշ դիսթիլրզի» ձեռքբերումից հետո «Պեռնո-Ռիկարը» սկսեց արտադրել նաեւ «Ջեյմսոն» վիսկի: Հայտնի է, որ ֆիրմայի գործունեության հետ կապված կարեւոր վճիռներ կայացնելիս Պատրիկ Ռիկարը մշտապես խորհրդակցել է հոր հետ:

Պոլ Ռիկարը մահացավ 1997 թ. նոյեմբերին. ֆիրմայի արժեթղթերի 20 տոկոսը թողնելով իր 31 թոռներին ու ծոռներին: Ներկայումս Պատրիկ Ռիկարը մեծ ջանքեր է գործադրում ժառանգորդների գոյատեւումը եւ միաժամանակ ընտանեկան ձեռնարկության ծավալումն ապահովելու նպատակով:

«Պեռնո-Ռիկարը» Ֆրանսիայում պահպանված հատուկենտ ընտանեկան ձեռնարկություններից մեկն է, որի ֆինանսական վիճակը համեմատաբար բարվոք է: 1996 թ. տվյալներով ընկերության դրամաշրջառությունը կազմել է 17 միլիարդ, իսկ եկամուտները 1,2 միլիարդ ֆրանկ: Ոգելից խմիչքներ արտադրող խոշորագույն ընկերությունների մեջ «Պեռնո-Ռիկարը» զբաղեցնում է աշխարհում 5-րդ տեղը: Առաջին տեղում բրիտանական «Դայջիո» ֆիրման է, որը 1996 թ. թողարկել 574, 2 մլն լիտր խմիչք: Երկրորդում դարձյալ բրիտանական «Ալայդ Դոմեքն» է (254, 7 մլն լիտր): Երրորդ տեղն զբաղեցնում է կանադական «Սիգրեմը» (205, 2 միլն լիտր): Չորրորդում բերմուդյան «Բակարդի» ընկերությունն է (184, 5 մլն լիտր): «Պեռնո-Ռիկարը» 1996 թ. արտադրել է 144 մլն լիտր խմիչք: Ըստ որում, լիկյորները կազմում են ֆիրմայի արտադրանքի ընդհանուր ծավալի մոտ 70 տոկոսը:

Անցյալ տարեվերջին Պատրիկ Ռիկարը եւ Թիերի Ժակիյան որոշեցին «Օրանժինան» 5 միլիոն ֆրանկով «Կոլա-կոլային» վաճառել ֆիրմայի ծավալման համար անհրաժեշտ կանխիկ դրամ ունենալու եւ ոգելից խմիչքների արտադրությունն ընդարձակելու նպատակով: «Էխոյրես» հանդեսի համաձայն, թեեւ անիսոնով լիկյորը աշխարհում սպառվող երրորդ խմիչքն է, բայց 1997 թ. «Պեռնո-Ռիկարի» արտադրած 65 միլիոն լիտրի միայն մեկ քառորդն է արտահանվել. Որոշ փորձագետներ, սպասելիքներ խաչեցնում են, թե այդ խմիչքի սպառումը հետագայում կրճատվելու է մասնավորապես հոգուս վիսկիի: Իհարկե, «Պեռնո-Ռիկարը» եւս ներկա է վիսկիի համաշխարհային շուկայում «Քլեն Քեմփբելի» եւ «Ջեյմսոնի» շնորհիվ, որոնք հանրահայտ 100 խմիչքների ցանկում են: Սակայն վիսկիի, ջինի եւ օղու ուրիշ հանրահայտ ֆիրմաներ ձեռք բերելու փոխարեն «Պեռնո-Ռիկարի» ղեկավարները բավարարվեցին իսպանական «Ջին Լարիոսի», հունական «Ուզո Սինիի» եւ իտալական «Ամարո Ռամազոտիի» գնումներով:

Պատրիկ Ռիկարը սիրված է խոշոր շահաբաժիններ վճարել ֆիրմայի կառավարմանը գրեթե չմասնակցող, բայց դրա արժեթղթերի 20 տոկոսին տիրող տոհմակիցներին. որպեսզի նրանք ամեն տարի եկամտահարկ վճարեն եւ չգայթակղվեն արժեթղթերի վաճառքի հեռանկարով:

Պ. Ք.



Կանայք գիտեն գաղտնիք պահել

Ռազմական գաղտնիքների բացահայտում 50 տարի անց

«Կալիֆորնիա կուրիերից» արտատպված մի հոդված «Արմինյն Միրոր Սփեքթեյթր» թերթի մայիսի 30-ի համարում ժխտում է այն թյուր կարծիքը, թե կանայք գաղտնիք պահել չգիտեն: Այնտեղ բերված փաստերը հաստատում են, որ ոչ թե մեկ, այլ 200 կանայք միեւնույն գաղտնիքը պահել են 50 տարի:

Խոսքը վերաբերում է «Ալիքներ» կոչված հատուկ ջոկատին, որի անդամներից մեկն էր ֆրեզնոցի, հայազգի Պենի Միրիգյան-Էմիրզյանը: Այդ խումբը Երկրորդ աշխարհամարտի օրերին «հույժ գաղտնի» ծառայություն պետք է կատարեր ամերիկյան նավատորմի համար եւ այդ հանձնարարությունը գաղտնի պահեր նույնիսկ ամենամտերիմներից... «հավիտյանս հավիտենից»:

Միայն վերջերս նրանց թույլատրվեց բացահայտել իրենց առաքելությունը: Այդ ժամանակ իրենց 20 ամյակը հազիվ թեւակոխած այդ կանայք ՀՖԲ-ի կողմից մանրազնին ստուգումների ենթարկվելուց հետո հատուկ կուրսեր են անցել թշնամու ձայնային ալիքները որսալու, Սորզե ծածկագրային համակարգին ծանոթանալու, ծածկագրերը կարդալու եւ այլ հմտությունների զարգացման համար: Նրանք նվիրված ծառայել են ամերիկյան նավատորմին, որի գաղտնագրության վերծանումների ասոցիացիան վերջերս հանդիպում հավաք էր կազմակերպել 50-ամյակի առթիվ Սեաթլում: Հավաքին ներկա է եղել նաեւ տկն Միրիգյանն իր ամուսնու Ջորջ Էմիրզյանի հետ: Այնտեղ նա հանդիպել է իր գործընկերներին, որոնց հետ կապ չէր պահպանել վերջին 5 տարիների ընթացքում միեւնույն գաղտնապահության հրամանը չխախտելու նպատակով: Բնական է, խոսելու եւ պատմելու շատ բան են ունեցել նրանք: Առիթից օգտվելով, նրանք այցելել են Բեյնբրիջ կղզու իրենց նախկին բազան եւ վերհիշել անցյալը:

Հ. Ռ.

ԲԱԼԿԱՆՆԵՐ

Հոլբրուկն ապառնացել է ՆԱՏՕ-ի պատժիչ օդային հարվածներով

ԲԵԼԳՐԱԴ, 24 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: ՄԱԿ-ում ԱՄՆ-ի մշտական ներկայացուցիչ Ռիչարդ Հոլբրուկը նախազգուշացրել է Հարավսլավիային ՆԱՏՕ-ի օդային հարվածներ հասցնելու հնարավորության մասին, եթե Հարավսլավիայի Միութենական Հանրապետության նախագահ Սլոբոդան Միլոշեւիչը Սերբիայի ոստիկանության հատուկ ստորաբաժանումները դուրս չբերի Կոսովոյից: Մեր խնդիրն է կանխել զինված ընդհարումների վերածումը բացահայտ պատերազմի, հայտարարել է նա երեքշաբթի օրը Բելգրադում:

Հարավսլավիայի մայրաքաղաքում ամերիկացի դիվանագետին ընդունել է Սլոբոդան Միլոշեւիչը, որի հետ նա քննարկել է ճգնաժամից դուրս գալու միջոցները: Նա հայտարարել է, որ Կոսովոյի հակամարտությունն սպառնում է տարածվել բալկանյան մյուս երկրներում, մասնավորապես Մակեդոնիայում եւ Բոսնիայում, որտեղ նույնպես մեծ է ալբան բնակչության բաժինը:

Մեկնաբանելով Հոլբրուկի ասածները Հարավսլավիայի դեմ արեւմտյան ուխտի ռազմական օդուժի կիրառման հնարավորության մասին՝ Հարավսլավիայի կառավարության նախագահ Մոմիր Բուլատովիչն ընդգծել է, որ իր երկիրը կպաշտպանվի «ՆԱՏՕ-ի ուժերի հարձակման դեպքում»:

«Ալբանիան Հարավսլավիայի հետ պատերազմի եզրին է»

ԲԵԼԳՐԱԴ, 24 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Գերմանական հեղինակավոր «Վելտ» թերթի տվյալներով, «Ալբանիայի վարչապետ Ֆատոս Նանոն առաջին անգամ բացահայտորեն խոստովանել է, որ իր կառավարությունը կարող է հաստատել Կոսովոյի անջատականների հետ»: Թերթը ամենայն լրջությամբ է ընկալել նախօրյակին Վիեննայում Նանոյի ասած խոսքը, որ «Ալբանիան Հարավսլավիայի հետ պատերազմի եզրին է»: Ընդսմին «Վելտը» նշել է, որ Ալբանիայի զինված ուժերի թվաքանակն այսօր հասնում է ընդամենը վեց հազարի, մինչդեռ Հարավսլավիան Կոսովոյում տասնապատիկ ավելի ուժեր ունի:

ԹՈՒՐՔԻԱ

Ընդդիմադիրները պահանջում են անվստահություն հայտնել կաբառակեր պետնախարարին

Թուրքիայի վարչապետ Մեսութ Յըլմազը սպառնացել է հրաժարվել վաղաժամկետ ընտրություններ կազմակերպելու իր խոստումից, եթե խորհրդարանը չվավերացնի կառավարության ներկայացրած տնտեսական բարեփոխման օրինագծերը: Միաժամանակ ընդդիմադիր պահպանողականները խորհրդարանին ներկայացրել են բանաձեւ, որով պահանջվում է անվստահություն հայտնել պետնախարար Էյուբ Ազբենին՝ նրան ամբաստանելով կոռուպցիայի մեջ: Եթե նախարարի դեմ նման բանաձեւ որդեգրվի, ապա կառավարությունը պետք է հրաժարական ներկայացնի: Ենթադրվում է, սակայն, որ ընդդիմությունը չի կարողանա ապահովել անհրաժեշտ մեծամասնությունը: Բանաձեւը կքննարկվի տասը օրվա ընթացքում:

Եգիպտոս-Թուրքիա ընդծովյա գազամուղի ծրագիր

Թուրքիայի էներգետիկայի նախարար Ջումհուր Էրսումերի եգիպտոս կատարած այցելության ընթացքում հյուրընկալող երկիրն առաջարկել է կառուցել Սուեզի ջրանցքից դեպի Թուրքիա ձգվող ընդծովյա գազամուղ: Եգիպտոսն առաջարկել է նաեւ իր բնական գազը Թուրքիային վաճառել ծովային տրանսպորտի օգտագործմամբ: Ինչպես հայտնի է, եգիպտոսի բնական գազի արդյունահանումը ներկայումս կազմում է օրական 1500 մլն խմ, այս քանակը կկրկնապատկվի 2000 թվականին:

«ՈՍՅԹԵՐ»-«ԵՐԵՎԱՆ»

ՏԱԲԵՐ

Ֆրանսիան լուծարել է միջուկային գիտափորձերի վարչությունը

ՓԱՐԻԶ, 24 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Միջուկային գիտափորձերի կենտրոնների վարչության լուծարմամբ Ֆրանսիան շրջեց միջուկային փորձարկումների 36-ամյա պատմության վերջին էջը: 1964 թվականին ստեղծված վարչությունը երկրի քաղաքական անկախության խորհրդանիշ էր, որն ապահովել է Ֆրանսիայի միջուկային ներուժի պահպանումն ու կատարելագործումը: Կենտրոնն ապահովել է Ֆրանսիայի կատարած գրեթե բոլոր 210 փորձարարական միջուկային պայթյունները: Առաջին պայթյունն իրականացվել է 1960 թվականի փետրվարի 13-ին Սահարայում, վերջինը՝ 1996 թվականի հունվարի 27-ին Խաղաղ օվկիանոսի Ֆանգատաուֆա օղակղզու զինափորձարանում:

Հնդկաստանի վարչապետը պատրաստ է հանդիպելու Պակիստանի վարչապետին

ԴԵԼԻ, 24 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հնդկաստանի վարչապետ Աթալ Բիհարի Վաջպային հավաստել է Հարավային Ասիայի երկրների տարածաշրջանային համագործակցության ասոցիացիայի՝ հուլիսի վերջին Կոլոմբոյում կայանալիք գագաթաժողովի ժամանակ Պակիստանի վարչապետ Նավազ Շարիֆի հետ հանդիպելու «պատրաստակամությունն ու ցանկությունը»: Ըստ ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի, այս մասին Հնդկաստանի ղեկավարն Իսլամաբադին տեղեկացրել է օրերս Նավազ Շարիֆին հղած ուղերձում: «Հարավային Ասիայի երկրների տարածաշրջանային համագործակցության ասոցիացիայի առաջիկա գագաթաժողովը Կոլոմբոյում Հնդկաստանին եւ Պակիստանին թույլ կտա համաձայնություն ձեռք բերել, թե ինչպես պետք է նրանք վերսկսեն ընդհատված երկխոսությունը», իր ուղերձում հայտարարել է Հնդկաստանի վարչապետը: Հարավային Ասիայի երկրների տարածաշրջանային համագործակցության ասոցիացիայի գագաթաժողովը Շրի Լանկայի մայրաքաղաքում տեղի կունենա հուլիսի 29-31-ին:

Ամերիկացիները հուշարձան են փախցնում... Աղանայից

«Ալ-Սաուրա» սիրիական թերթն իր հունիսի 7-ի համարում, հենվելով Անկարայից Սանաա լրատվական գործակալության տվյալների վրա, հաղորդում է, որ Թուրքիայի անվտանգության մարմինները, իրենց ամերիկացի գործընկերների համագործակցությամբ, կարողացել են ձերբակալել հինգ հոգուց բաղկացած մի հանցախումբ, որն զբաղվում էր Աղանայից հուշարձանների հափշտակությամբ: Թուրքական «Զաման» թերթի համաձայն, այդ անձնավորություններից մեկը մայորի աստիճանով զինվորական է եղել Դերեկ Ֆոքս անունով, որը ծառայելով Աղանայում տեղավորված ռազմաօդային զորամասում, կարողացել է հուշարձաններն Ամերիկա տեղափոխման համար ինքնագիր տրամադրել իր ընկերներին:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

«Ինչ էլ որ անում եմ, անում եմ սիրով եւ ուրախությամբ»

Լրացավ ՀՀ ազգային ռադիոյի հաղորդավարուհի, հանրաճանաչության վաստակավոր արտիստուհի, ասմունքող Վերա Հակոբյանի ծննդյան 70-ամյակը: Ստորեւ ընթերցողին եմք ներկայացնում նրա հետ հարցազրույցը, որը վարում է ՀՀ ազգային ռադիոյի ծրագրերի տնօրեն, լրագրող Մարտին Պետրոսյանը:

– Տկն Հակոբյան, մեր հանդիպման առիթը ձեր ծննդյան 70-ամյակն է: Դուք դեմ չեք, իհարկե, մի փոքրիկ հարցազրույցի...

– Նախ, շնորհակալություն, որ իմ ծննդյան 70-ամյակն արժանացել է ուշադրության եւ առիթ դարձել այս հանդիպմանը: Ասեմ, որ չեմ ափսոսում ապրածս տարիների համար: Ուղղակի ցավն այն է, որ, այսպես թե այնպես, 70-ն առաջացած տարիք է՝ հատկապես կնոջ համար...

– Եվ ուրեմն այդ բարձունքի՞ց եք դուք նայում կյանքին...

– Այո... Եվ այդ տեսանկյունից եմ իմաստավորում կյանքը, իմ ստեղծագործական աշխատանքը...

– Եվ ունեք հուշեր, անշուշտ...

– Ինչքան ուզեք... Եվ վատ, եւ լավ հուշեր: Վատի մասին չեմ ուզում երկար-բարակ հիշել (բնավորությամբ լավատես եմ), միայն հիանալի ասեմ, որ ես տխուր մանկություն եմ ունեցել: Երբ դեռ նոր էի լույս աշխարհ եկել, հորս կողմից որբացա, նրան, որպես Զորավար Անդրանիկի զինակից, բռնեցին, բայց հայրս փախավ, դեգերեց աշխարհի տարբեր երկրներում եւ վերջին հանգրվանը գտավ Ամերիկայում...

Սկզբնական շրջանում այդ հանգամանքը (որ ես դաշնակցականի դուստր եմ) իր կնիքը դրեց իմ կյանքի վրա եւ ես որոշակի դժվարությունների հանդիպեցի:

Սակայն խոսենք հաճելի բաների մասին:

...Երբ սովորում էի Երեւանի Մաշտոցյանի անվան դպրոցում, ես՝ փարեզցի աղջնակս, առիթը բաց չէի թողնում արտասանելու: Արտասանում էի թե մեր նշանավոր բանաստեղծների, եւ թե ժամանակակից երիտասարդ ստեղծագործողների գործերը:

Բայց իմ մասնագիտական կողմնորոշման համար երեւի իր վճռական դերն ունեցավ թատրոնը: Մասնավորապես Հրայր Ներսիսյանի ասմունքը: Ես այնքան տարվեցի հանճարեղ արտիստի ասմունքով, որ երազում էի նրա հետ գոնե մի խոսք փոխանակել: Գնում էի այն ծառուղին, որով ամեն օր, ճիշտ նույն ժամին, անցնում էր իմ կուռքը՝ անկրկնելի Հրայր Ներսիսյանը: Քայլում էի նրա հետ որոշ տարածություն, լսում նրա աստվածային ձայնը: Այդ պահերին շատ երջանիկ էի զգում ինձ:

Վերադառնում էի տուն, գիրքը ձեռքս վերցնում: Կարդում, անգիր էի անում այն գործերը, որոնք լսել էի մեծ դերասանից:

Հետո արդեն ընդունվեցի գեղարվեստա-թատերական ինստիտուտ եւ, կարող եմ ասել, որ այդ տարիներին ես երազային աշխարհում էի...

– Դուք սփյուռքահայ շատ գաղթօջախներում եք հյուրընկալվել: Ձեր ո՞ր հանդիպումն է ավելի հիշարժան...

– Ի դեմ, ասեմ, որ մինչեւ իմ արտասահմանյան ուղեւորությունները, սփյուռքում արդեն մեր հայրենակիցները գիտեին ինձ: Դրան, անշուշտ, նպաստել էր իմ հաղորդավար լինելը: Մանավանդ որ ես հաճախակի գրական-գեղարվեստական նյութեր էի կարդում արտասահմանի համար տրվող հաղորդումներում: Ասմունքում էի ինչպես արեւելահայ, այնպես էլ արեւմտահայ բանաստեղծների ստեղծագործություններից...

Սփյուռքում իմ ամեն մի հանդիպում հիշարժան է յուրովի: Մեր հայրենակիցները շատ ջերմ են ընդունում հայրենիքից գնացած արվեստագետներին, առավել եւս ռադիոյի խոսնակներին, որոնց միջոցով է մասնավորապես նրանց կապը մայր հայրենիքի հետ: Դա մի ուրիշ զգացում է, որը կարող է ունենալ միայն աշխարհաստիպուռ հայը: Զարմանալի չէ, որ երբ իմ հերթական այցելության ժամանակ Լիբանանի հայ գաղութում՝ Բեյրութում, ելույթ ունեցա, որը մի քանի ժամ տեւեց, եւ այդ ընթացքում մեր հայրենակիցներին ներկայացրի մի քանի տասնյակ ստեղծագործություններ Չարենցից, Տերյանից, Շիրազից, Պ. Սեւակից, Կապուտիկյանից, Էմինից, Դավոյանից, Գ. Ադդարյանից, Վ. Թեքեյանից, Ա. Կիրակոսյանից, Մ. Իշխանից, երկար-երկար ծափահարություններից հետո դահլիճում նստածները, ասես խոսքը մեկ առած, պահանջում, խնդրում էին կրկնել «երեւանն է խոսում» արտահայտությունը: Այդ մի հատիկ արտահայտության մեջ անհուն սեր էր պարփակված մայր հայրենիքի հանդեպ...

– Եվ ուրեմն, հաղորդավար եւ ասմունքող. ո՞րն է ձեզ համար առաջնայինը:

– Հաղորդավար... Հաղորդավարական իմ աշխատանքը... Այն իմ կյանքի ուղեկիցն է, ինձ երջանիկ պահեր պարգեւողը: Երջանկություն էր, օրինակ, որ ինձ՝ ռադիոյի երիտասարդ հաղորդավարուհուս, վստահվեց Վ. Տերյանից ասմունքել հեռուստատեսության նորաստեղծ գրական խմբագրության առաջին հաղորդման մեջ...

– Եվ եթե նորից ծնվեի՞ք...

– Նորից նույնը կդառնայի. նախ՝ հաղորդավար, եւ ապա՝ ասմունքող...

– Տկն Հակոբյան, 2001 թ. կլրանա ռադիոյում ձեր աշխատելու 50 տարին: Ձեր ունկնդիրներին ստեղծագործական ի՞նչ նոր մտահղացումներով եք ուրախացնելու: Նրանք արդեն ձեր կատարմամբ լսել են եւ լավ են ընդունել գրական կոմպոզիցիաները՝ կոմիտասյան, շիրազյան, սեւակյան եւ այլոց թեմաներով:

– Թող դա մնա որպես գաղտնիք: Մի բան, սակայն, պարզ է՝ ինչ էլ որ անում եմ, անում եմ սիրով եւ ուրախությամբ...

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Հողը ժողովրդով է հայրենիք, նաեւ կենդանի հիշողությամբ

Կարոտի ձայն... Զգացմունքները նույնպես ձայն ունեն, ինչպես սերը եւ կարոտը, դու սիրում ես եւ կարոտում, կարոտում ես եւ սիրում, դրանք աշխարհի ամենահիանալի ձայներն են, որովհետեւ բխում են հոգուց: Սիրում է հոգին մի մարմնի մի քանի գրամը, որն ավելի ծանր է, քան մարմինը: Հոգին կարոտում է նրան, որ իր հավերժական թռիչքի մեջ կա եւ չկա...

Ես նոր ավարտեցի պատմաբան, «Հայաստան» թերթի գլխավոր խմբագիր Հենրիկ Աբրահամյանի «Բայազետ» գրքի («Առերեսում-Անի», Երեւան, 1998, 128 էջ) ընթերցումը, որը ինձ հուշեց գրելու վերեւի տողերը մեր ներսում վսեմ տխրությամբ ապրող ձայների գեղեցիկ զուգորդության մասին:

Մենք ապրում ենք մեր մեծ հայրենիքի անմար հիշողությունների քարտեզում, աղամանդի պես գերխիտ այս մի ափ հողի վրա, որը եթե տարալուծենք, կստացվի մի ամբողջ ծով հայրենիք՝ երգնկան, Այնթապը, Բայազետը, հազար ու մի մայր ծննդավայրեր, որոնց մենք այստեղ ավելացրել ենք «նոր» բառը, որպեսզի չմոռանանք «հինը»՝ մեր հոգու անծայրներում, ժամանակների խառնում լուռ թե բարձրաձայն ողբերգության խոսող մեղեդին: «Բայազետը» այդ մեղեդին է, մենք ենք, մեր անցյալն ու ներկան: Հենրիկ Աբրահամյանը հնագետ պատմաբանի վարպետությամբ «վերաշինել է» այս կամուրջը մեր հին ու նոր ափերի միջեւ, որ հայոց աշխարհի կարեւոր կամուրջներից է, այսօր այն դարձել է մեր հուզաշխարհում բանուկ ճանապարհ՝ գրքի գլխավոր արժանիքը, իր՝ հայ ժամանակակից ոգեղեն մարդու հայացքով տեսել-իմաստավորել մեր այս փոքր հայրենիքի բարդախում մեծ սիրտը:

Արեւմտյան Հայաստանի Բայազետ քաղաքը՝ համանուն գավառով, անհայտ խնդիր չէ մեր պատմագիտության մեջ, սակայն հասարակական դաշտում ունի բազմաթիվ չպարզաբանված հարցեր: Հենրիկ Աբրահամյանի գիրքը ծանոթ եւ ավելի նոր փաստավավերագրերով տալիս է այդ հարցերից շատերի պատասխանները, այսպես ասած՝ ժողովրդականացնում են այն ոչ միայն ներկայիս բայազետցիների՝ գերված հին քաղաքի ու գավառի այլուն, այլեւ բոլորիս: Հին Բայազետով անցել են Գրիբոյեդովը, Պուշկինը, Նարոլեոնի գործակալ Ժոբերը, գեներալ Պոտոմովը՝ թողնելով գրավոր տպավորություններ, իսկ գերմանացի ճանապարհորդ Վագները քաղաքի բերդն ասես նկարել է. «հանդուգն եւ հրաշակերտ մի շինվածք է՝ այնպիսի տեղերի վրա հաստատված, որ բազեներն ու անգղները հազիվ թե համարձակվեն բուն դնել»: Ռուս-թուրքական պատերազմում Բայազետը եղել է հայերիս համար արյունալի ճակատամարտ-թատերաբեմ՝ խորհրդանշելով ժողովրդի հերոսական ոգին: Այնուհետեւ քաղաքն «ընդմիշտ», ասել է առ այսօր, լռում է՝ լարտասանելով հայերեն ոչ մի բառ, ժողովուրդը գաղթում է Սեւանի ափերը եւ հիմնադրում իր նոր հայրենի եզերքը:

Հողը ժողովրդով է հայրենիք (մեր դեպքում նաեւ կենդանի հիշողությամբ) եւ իր մեծանուն հոգեւոր մարդկանց հետքերով: Նրանցից ամենամեծը, Աբովյանն էր, նա եղավ Գեղամա լեռներում, Նոր Բայազետում եւ իր անձով սրբացրեց հայրենիքի նաեւ այս հողը:

Հենրիկ Աբրահամյանի «Բայազետ» գիրքն ակադեմիական պատմագրություն չէ, այլ վիպագրություն: Նա պատմում է պարզ ու պատկերավոր լեզվով, զգացմունքներ ապրում ու վերապրում, կարոտում իր նախնիների աշխարհը, որ չի տեսել, երազել է, եւ եթե տեսել է, ապա միայն՝ նրա լուսե տեսիլքը, սիրում է իր ծննդավայրը, հպարտանում նրանով ոչ նեղմտորեն (նման դեպքում հաճախ հանդիպող նեղտրտություն), այլ հայ մտավորականի, Հայաստանի քաղաքացի-տիրոջ հպարտությամբ: Սա ընդարձակ էսսե է՝ պատմագեղարվեստական ակնարկ հին-նոր հայրենիքի մասին, որի լավագույն էջերը, ինչպես օրինակ՝ «Հայտնության լեռներ», ընթերցողին հմայում են իրենց կարույց սիրով ու կարոտով:

Վավերագրական այս ժանրի նշանակությունը մեծ է մեր գրականության մեջ՝ պահպանելու հայրենական ծովի կոգիները մեր հուզաշխարհում, լինելու թեեւ նրանցից հեռու, սակայն նրանց հետ:

ՆԱՐԵՍԻ ԱՊԱՍՅԱՆ

ԳԵՂԱՆԿԱՐՇՈՒԹՅՈՒՆ

Հենրիկ Իգիթյանի թանգարանը՝ շքեղ պատկերագրքով

1972 թվականի հունիսի 8-ին Երեւանում բացվեց արդի արվեստի թանգարանը, առաջինը ոչ միայն ԽՍՀՄ-ում, այլեւ միակը ամբողջ սոցիալիստական բլոկում, որին էլ իր «Թանգարան» գիրքն է նվիրել հեղինակը՝ այդ թանգարանի հիմնադիր Հենրիկ Իգիթյանը: Երեք լեզվով հրատարակված պատկերագրքի (հայերեն, ռուսերեն եւ անգլերեն) տպաքանակն այժմ տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում, իսկ այնտեղից բերված «ազդանմուշը» մի քանի ժամով Արմենպրեսի թղթակցին տրամադրեց հեղինակը:

Թե ինչպես է ստեղծվել այդ թանգարանը պատմության էջ է դարձել, բայց իրավունք ստանալու համար այն մի իրական գողգոթա է անցել, այս մասին հանգամանորեն պատմում է Իգիթյանը: Եվ եթե չլինեին բարի, ազնիվ մարդիկ, կոմունիստական տարիների այդ բարդ ու գրեթե անհաղթահարելի պաշտոնը դժվար թե կարողանար հաղթահարել Հենրիկ Իգիթյանը: Այդ մարդկանցից է եղել Երեւանի նախկին քաղաքապետ, այժմ կենսաթոշակառու Գրիգոր Հասրաթյանը, որը թանգարանի համար շենք կառուցել տվեց, առանց հաշվի առնելու կոմկուսի կենտկոմի կարծիքը, որի համար էլ տուժեց աշխատանքում:

Համառ Հենրիկ Իգիթյանը բացում թշնամիներ, խոչընդոտներ ձեռք բերած, կարողացավ հաղթահարել, որովհետեւ իր թիկունքում էին Սարյանը, Քոչարը, Մինաս Ավետիսյանը, Ռուբեն Շահվերդյանը, Գրիգոր Խանջյանը, Ղուկաս Չուբարյանը, Հովսեփ Կարալյանը, Հակոբ Հակոբյանը, Արտ Չամամչյանը, Ռուբեն Ադալյանը, Մանուկ Ղրդյանը, Ռուդոլֆ Խաչատրյանը, Գուրգեն Առաքելյանը, Սպարտակ Մելիքսեթյանը, շատերը:

Իսկ այսօր էլ այլ մտահոգություններ ունենք, նշում է Իգիթյանը, ցավով ավելացնում, որ պետական հովանավորությունից զրկվելով, մշակույթի կենտրոնները, այդ թվում թանգարանները վտանգված են ու դժվար օրեր են ապրում: «ԱՄՆ-ում, Եվրոպայում բոլոր թանգարանները շողշողում են, ոչ ոք շահույթի մասին չի էլ մտածում, աշխարհում ոչ մի թանգարան չի կարող ինքն իրեն պահել, բայց այդուհանդերձ, նրանք արժանավոր ու ազդեցիկ տեսք ունեն, նրանք պետության դեմքն են», գրում է Իգիթյանը:

Գրքի վերատպությունների «երթը» սկսում է Մարտիրոս Սարյանը, այնուհետեւ այս աշխարհում ընթերցողը տեսնում է հայ կերպարվեստի մեծերին, որոնք եւ կան Իգիթյանի թանգարանում, եւ չկան: Սա միայն ժամանակակից արվեստի թանգարանը չէ, այլ գումարած նաեւ հայ կերպարվեստի այն մեծերին, որոնք ներկա են թեկուզ իրենց անհասանելի բացակայությամբ, ասում է Իգիթյանը:

Այստեղ են Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանը, Գեւորգ Գրիգորյանը (Զոհսն), Հովսեփ Կարալյանը, Երվանդ Քոչարը, Գրեգորիո Շլդյանը, Ժիրայր Օրբելյանը, Արշիլ Գորկին, Լեւոն Թոյուզջյանը, Պետրոս Կ ոնտուրաջյանը, Գառզուն, Կալենցը, Հակոբ Անանիկյանը, Մինասը, Աշոտ Հովհաննիսյանը, Վրույր Գալստյանը եւ շատ ուրիշներ:

Բազմաթիվ արվեստագետներ եւ այլ մասնագիտության տեր նշանավոր մարդիկ են այցելել թանգարան, իրենց գնահատանքի խոսքն ասել՝ Ալեքսանդր Կամենսկի, «Նու Յորք թայմսի», «Թայմսի», «Յուսանիտեի» հեղինակներ, Բոխումի թանգարանի տնօրեն Շոթլման, Փարաջանով, Բորիս Պիոտրովսկի, Մեժելայտիս, Այթմատով, Ուլյանով, Անտոնիոնի, Սարոյան, Ռեֆրեժիե, Գուտուզո եւ ուրիշներ:

Գրքում զետեղված են հայ գեղանկարիչների բազմաթիվ լուսանկարներ, որ կատարել են Անդրանիկ Քոչարը, Բաբկեն Մավիսակալյանը, Պողոս Պողոսյանը, Զավեն Սարգսյանը, Ավետ Եսայանը եւ այլ վարպետներ, որոնց անուններն անհայտ են հեղինակին:

Ալբոմի հրատարակման առթիվ հեղինակը շնորհակալություն է հայտնում մայրաքաղաքի մի շարք թանգարանների ու մասնավոր անձանց, որոնք նպաստել են նրա լույս աշխարհ գալուն, երախտագիտությունը՝ «Տիգրան Մեծ» հրատարակչության տնօրեն Վրեժ Մարկոսյանին եւ գլխավոր ինժեներ Գագիկ Սուքիասյանին՝ հրատարակության լավ պոլիգրաֆիական կատարման համար:

«Նայած գրքի վերջում արված գրությանը՝ «Տպագրված է Հայաստանում, ասաց Իգիթյանը, ցույց տալով նաեւ աշխարհի տարբեր երկրներում հրատարակված զանազան պատկերագրքեր: Ոչ մեկին չի զիջում իր բարձր որակով: Ինչպե՞ս երախտագիտություն չհայտնես»:

ՎԱՆԻԿ ՍՈՆԹԱՐՅԱՆ
Արմենպրեսի թղթակից
«Ազգ»-ի համար

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայ-Արտ մշակութային կենտրոնը հրավիրում է Ձեզ

Արեւելք-Արեւմուտք
Կոնտեքստ

տեսա-ինֆորմացիոն ցուցահանդեսի բացմանը:

Բացման արարողությունը տեղի կունենա հունիսի 26-ին, ժ. 19:00-ին Հայ-Արտ մշակութային կենտրոնում:

Հայ-Արտ մշակութային կենտրոն, Մաշտոցի 7ա

Շնորհանդեսը հունիսի 26-ին, ժ. 18:00-ին
Բաց է ամեն օր, ժամը 11:00-18:00, բացի երկուշաբթի օրերից:

digitised by A.R.A.R.@

ՖՐԱՆՍԻԱ-98

Չորս մասնակիցներ հայտնի են

Աբխարհի առաջնությունում երկու խմբերում խաղերն ավարտվեցին: Վերջին տուրի հանդիպումներն անվանեցին այն 4 երջանիկ թիմերին, որոնք պայքարը կշարունակեն հաջորդ փուլում: Խաղերը չափազանց համառ, լարված, նաեւ դրամատիկ բնույթ կրեցին: A խմբում խոշոր անակնկալ գրանցվեց աբխարհի քառակի չեմպիոն Բրազիլիայի հավաքականը պարտություն կրեց Նորվեգիայի հավաքականից: B խմբի 4 թիմերն էլ հաջողության հույսեր ունեին: Ավելի բախտավոր (եւ ուժեղ) գտնվեցին Իտալիայի եւ Չիլիի հավաքականները: Հունիսի 27-ին 1/8 եզրափակիչում կհանդիպեն Բրազիլիա-Չիլի, Իտալիա-Նորվեգիա զույգերը: Հաջորդ փուլի 2 թիմեր հայտնի դարձան երեկ ուշ երեկոյան, իսկ մյուս 4-ը կորոշվեն այսօր ու վաղն անցկացվելիք խաղերից հետո:

Խումբ A

ՄԱՐՈԿԿՈ-ՇՈՏԼԱՆԴԻԱ՝ 3-0 (1-0):
Սենթ Էթյեն, «Ժոֆռուա Գիշար» մարզադաշտ:
Մրցավար՝ Բույսաիմ (ԱՄԷ):
Գոլերը խփեցին Բասսիրը (22, 84), Հադդան (47):
Խաղադաշտից հեռացվեց Բեռլին (73)՝ Շոտլանդիա:
Մարոկկոյի հավաքականի անդամները համոզված էին, որ շոտլանդացիներին հաղթելու դեպքում 1/8 փուլ դուրս կգան, քանի որ չափազանց դժվար էր պատկերացնել, որ Նորվեգիան առավելության կիսասի աբխարհի չեմպիոնների նկատմամբ: Ավա՜ղ... Մարոկկոյի ֆուտբոլիստները հիանալի խաղ ցույց տվեցին: Խաղադաշտի կենտրոնում հաջող էր գործում Մուսաֆա Հաջին՝ ժամանակին հարձակվողներին գնդակներ մատակարարելով:

Հյուսիսաֆրիկացիներն այս խաղում ավելի շատ գոլային հնարավորություններ ունեցան, քան շոտլանդացիները եւ երեք անգամ գրավեցին մրցակցի դարպասը: Երկու անգամ իր բարձր վարպետությամբ փայլեց Սալահեդդին Բասսիրը, իսկ 3-րդ գոլը խփեց Աբդելիհիլիլ Հադդան: Մարոկկոյի հավաքականը հաղթեց 3-0 հաշվով, սակայն խաղից հետո նրա ֆուտբոլիստների աչքերին ոչ թե ուրախության արցունքներ էին, այլ մեծ տխրության: Իհարկե, կարելի է հասկանալ թիմի խաղացողներին ու մարզչին՝ ֆրանսիացի Հանրի Միշելին:

ԲՐԱԶԻԼԻԱ-ՆՈՐՎԵԳԻԱ՝ 1-2 (0-0):
Մարսել, «Վելոդրոմ» մարզադաշտ:
Մրցավար՝ Բահարմասթ (ԱՄՆ):
Գոլերը խփեցին Բեբետոն (78)՝ Բրազիլիա, Տ.-Ա. Ֆլուն (83), Ռեկդալը (89, 11 մետրանոցից)՝ Նորվեգիա
Ինչպես երեւում է, Նորվեգիայի հավաքականը աբխարհի չեմպիոնների համար դժվար մրցակից է դարձել: Մի քանի ամիս առաջ բրազիլացիները հյուսիսային այս երկրի թիմին պարտվեցին 2-4 հաշվով:
Ամբողջ խաղի ընթացքում Բրազիլիայի հավաքականը փոփրիկ առավելություն էր պահպանում: Առաջին խաղակեսը հիմնականում հանգիստ անցավ, սակայն երկրորդում պայքարը սրվեց: Ընդ որում, ակտիվության նախաձեռնողները նորվեգացիներն էին, քանի որ ոչ-ոքի արդյունքը նրանց չէր բավարարում: Այդուհանդերձ, առաջին գոլը հայտնվեց հենց Նորվեգիայի հավաքականի դարպասում: 78-րդ րոպեին բրազիլացի Դենիլսոնը ձախ եզրով առաջ շարժվեց, ու չնայած մրցակցի պաշտպանները կոպիտ խաղացին նրա դեմ, կարողացավ ճշգրիտ փոխանցում կատարել իր խաղընկեր Բեբետոյին: Գլխի հարված, եւ հաշիվը բացված է: Ընդամենը 5 րոպե անց Նորվեգիայի թիմի ամենաակտիվ խաղացողը՝ Տորե-Անդրե Ֆլուն հավասարեցրեց հաշիվը: Բրազիլացիների տուգանային հարապարակի անկյունում նա վարպետորեն խաբս տվեց Ժունիոր Բայանոյին, առաջացավ եւ խփեց պատասխան գոլը: Իսկ հանդիպման ավարտից 2 րոպե առաջ մրցավարը, գրանցելով կանոնների խախտում, 11 մետրանոց տուգանային հարված նշանակեց: Նորվեգացի Չեսիլ-Անդրե Ռեկդալը հստակորեն իրացրեց այն՝ 2-1:

	Թիմեր	1	2	3	4	Գ	Ս
1	Բրազիլիա		1-2	3-0	2-1	6-3	6
2	Նորվեգիա	1-2		2-2	1-1	5-4	5
3	Մարոկկո	1-2	2-2		3-0	5-5	4
4	Շոտլանդիա	1-2	1-1	0-3		2-6	1

Խումբ B

ԻՏԱԼԻԱ-ԱՎՍՏՐԻԱ՝ 2-1 (0-0):
Սեն Դենի, «Սթադ դը Ֆրանս» մարզադաշտ:
Մրցավար՝ Դուրկին (Անգլիա):
Գոլերը խփեցին Վիերին (49), Ռ. Բաջջիոն (89)՝ Իտալիա, Հերցոգը (90, 11 մետրանոցից)՝ Ավստրիա:
Եթե շատ թիմերի մարզիչներ բարձրակարգ խաղացողների պակաս են զգում, ապա Իտալիայի հավաքականի գլխավոր մարզիչ Չեզարե Մալդինին այլ դժվարություններ ունի: Նա չգիտի, թե գրոհի գծում իր հիանալի հարձակվողներից որին խաղացնի: Ավստրիայի հետ հանդիպման ժամանակ բազմափորձ Մալդինին առաջին գծում խաղացրեց Ալեսանդրո Դել Պիերո-Քրիստիան Վիերի երկյակին:
Առաջին խաղակեսն ընթացավ դիրքային, կոշտ պայքարում: Ավստրիացիները 3 «դեղին» քարտ վաստակեցին: Հենց 2-րդ րոպեին վնասվածք ստացավ եւ խաղադաշտը թողեց իտալացիների պաշտպան Ալեսանդրո Նեստան, եւ նրան փոխարինեց վետերան, 1982-ի աբխարհի չեմպիոն Ջուզեպե Բերգոմին:
Երկրորդ խաղակեսի սկզբին Դել Պիերո-Վիերի կոմբինացիան ավարտվեց գոլով: Այնուհետեւ փոխարինման մտան Ռոբերտո Բաջջիոն եւ Ֆիլիպո Ինզագին: Խաղի նախավերջին րոպեին նրանց ջանքերով խփվեց 2-րդ գոլը: Սակայն ավստրիացիներին հաջողվեց «թրջել» հաշիվը, երբ Անդրեաս Հերցոգը հստակորեն իրացրեց 11 մետրանոց տուգանային հարվածը:
«Ես շատ երջանիկ եմ, խաղից հետո հայտարարեց Չեզարե Մալդինին, երջանիկ եմ, որ հաջորդ խաղում բրազիլացիների հետ չեմք հանդիպելու»:

ՉԻԼԻ-ԿԱՄԵՐՈՒՆ՝ 1-1 (1-0):
Նանս, «Բոժուար» մարզադաշտ:
Մրցավար՝ Վագներ (Հունգարիա):
Գոլերը խփեցին Սիեռան (21)՝ Չիլի, Սբոման (56)՝ Կամերուն:
Խաղադաշտից հեռացվեցին Սոնգը (49), Էտամե Մայեռը (88)՝ Կամերուն:
Սա առաջնության ամենադրամատիկ խաղերից մեկն էր: Հանդիպման առաջին կեսն անցավ Չիլիի հավաքականի առավելությամբ, իսկ 21-րդ րոպեին Խոսե Լուիս Սիեռայի մոտ 20 մետրից կատարած տուգանային հարվածը պարզապես հոյակապ էր: Որքան էլ տարօրինակ է, Կամերունի թիմն ակտիվացավ, երբ 2-րդ խաղակեսի սկզբին դաշտից հեռացվեց իր խաղացողներից մեկը: Շուտով Պատրիկ Սբոման, ստանալով թիմի ավագ Ֆրանսուա Օմամ-Բիյիկի աջ եզրից կատարած փոխանցումը, հավասարեցրեց հաշիվը: Աֆրիկացի ֆուտբոլիստներն անմիջապես խփեցին նաեւ 2-րդ գոլը, սակայն մրցավարը կամերունցիների կողմից կանոնների խախտում արձանագրեց:
Այդպես էլ այս լարված, կոշտ պայքարով հագեցած խաղն ավարտվեց 1-1 հաշվով, եւ 1/8 եզրափակիչ փուլ դուրս եկան Չիլիի ֆուտբոլիստները:

	Թիմեր	1	2	3	4	Գ	Ս
1	Իտալիա		2-2	2-1	3-0	7-3	7
2	Չիլի	2-2		1-1	1-1	4-4	3
3	Ավստրիա	1-2	2-2		1-1	3-4	2
4	Կամերուն	0-3	1-1	1-1		2-5	2

ՇԱԽՄԱՏ

Մրցաշարը հասավ «հասարակածը»

Լիլիթ Մկրտչյան

Հայաստանի կանանց առաջնության բարձրագույն խմբի մրցաշարում եւս երկու տուր խաղացվեց: Հասնելով մրցաշարային «հասարակածին», պայքարն ավելի սրվեց: Երկու անընդմեջ պարտություն կրեց նախկին առաջատարը՝ Լիլիթ Գալստյանը, միայն ոչ-ոքիներով բավարարվեց Լիլիթ Մկրտչյանը: Իսկ ահա Նելլի Աղինյանին հաջողվեց պարտության մատնել վարպետ Էռնա Խալաֆյանին, ապա ոչ-ոքի խաղալ Նոնա Սահակյանի հետ: Այժմ Աղինյանը եւ Լիլիթ Մկրտչյանը 5-ական միավորներով բաժանում են առաջին-երկրորդ տեղերը: Լիլիթ Գալոյանը 4,5 միավորով ընթանում է երրորդ տեղում, Արուսյակ Գրիգորյանը, Նաիրա Սովսիսյանը եւ Նարինե Գասպարյանը 4-ական միավորով կազմում են հետաքրքրողների խումբը: Եվս 3 շախմատիստուհիներ՝ Մարիաննա Գասպարյանը, Գոհար Հլղաթյանը եւ Նոնա Սահակյանը ունեն 50-տոկոսանոց արդյունք:
Առաջնության ավարտին մնացել է 4 տուր:

ԱՐՄԵՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԹԵՆԻՍ

Սարգիս Սարգսյանի հաղթանակը

Ուիմբլդոնի մրցաշարի բնական ընթացքին խանգարեց հորդ անձրեւը: Շատ խաղեր ընդհատվել են եւ կշարունակվեն ավելի ուշ:
Մրցումները հաջող սկսեց երեւանցի Սարգիս Սարգսյանը: Հանդիպելով իսպանացի Ալբերտո Պորտասի հետ՝ նա փրկվելու ոչ մի հնարավորություն չտվեց մրցակցին եւ վստահ հաղթանակ տարավ 6-0, 7-5, 6-2 հաշվով: Մրցաշարի երկրորդ տուրում Սարգիսն այսօր կհանդիպի Շվեդիայի ներկայացուցիչ Մագնուս Լարսոնի հետ (նա առաջին խաղում հաղթել է ուրուգվայցի Մարսելո Ֆիլիպինիին):
Առաջին փուլում հաղթանակներ տարան նաեւ Պետր Կորդան (Չեխիա), Թոդ Վուդբրիջը, Պատրիկ Ռաֆթերը (Ավստրալիա), Նիկոլաս Կիֆերը (Գերմանիա):
Կանանց մրցաշարում ուժեղագույն թենիսիստուհիներից հաջորդ փուլ են դուրս եկել Լինդսեյ Դեւենպորտը, Վենուս Վիլյամսը (ԱՄՆ), Յանա Նովոտնան (Չեխիա), Նատալի Տոզյան, Սանդրին Տեսյուն (Ֆրանսիա), Եթֆի Գրաֆը (Գերմանիա), Ելենա Լիխովցեւան (Ռուսաստան): Ռուսաստանի մեկ այլ ներկայացուցիչ՝ Աննա Կուռնիկովան Ուիմբլդոնին նախորդած մամուլի ասուլիսում հայտարարեց, որ մրցաշարին չի մասնակցի:
Պատճառը վնասվածքն է, որ 17-ամյա մարզուհին ստացել է օրերս, երբ Իսպրոռնում անցկացված մրցաշարում հաղթեց նախկինում աբխարհի թիվ 1 ռակետ Եթֆի Գրաֆին:

Մարտինա Հինգիս

ԲՈՆՅՔՍՄԱՐՏ

Վերադարձ բրոնզե մեդալներով

Չինաստանի Շոնկինգ քաղաքում անցկացվեց բոնցքամարտի աբխարհի գավաթի թիմային խաղարկությունը, որին մասնակցեցին աբխարհամասերի հավաքականները: Եվրոպայի հավաքականի կազմում ընդգրկված էին նաեւ Հայաստանի՝ երեք ներկայացուցիչներ՝ վանաձորցի Վախթանգ Դարչինյանը (51 կգ քաշային կարգ), երեւանցիներ Արամ Ոսմազյանը (54 կգ) եւ Արշոմ Սիմոնյանը (57 կգ): Թիմի կազմում գրավելով 3-րդ տեղը՝ Հայաստանի երեք բոնցքամարտիկներն արժանացան բրոնզե մեդալների:

ԹԵԹԵՎ ԱՍԼԵՏԻԿԱ

Հաղթանակ Ստամբուլում

Ստամբուլում անցկացվեց թեթեւ ատլետիկայի խոշոր մրցաշար, որտեղ հանդես եկան ավելի քան 40 երկրների ուժեղագույն մարզիկներ:
Ինչպես հայտնեցին ՀՀ սպորտվարչության լրատվության բաժնից, այդ ներկայացուցչական մրցումներում հիանալի հանդես եկավ գյումրեցի երեսաստկոր Արմեն Մարտիրոսյանը: Ցույց տալով 16 մ 70 սմ արդյունք՝ նա գրավեց առաջին տեղը եւ արժանացավ հատուկ գավաթի: Հաղթողին մրցանակը հանձնեց Թուրքիայի սպորտի նախարարը:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽԱՂԵՐ

Վառվեց պատանեկան խաղերի կրակը



Հին աբխարհի օլիմպիական խաղերի հայրենիքում՝ հունական Ակրոպոլիսի մոտ գտնվող Պնիքս սարի վրա ճրմուռիները վառեցին հուլիս ամսին Մոսկվայում կայանալիք Համաշխարհային պատանեկան առաջին խաղերի կրակը: Հանդիսավոր արարողությանը ներկա էին միջազգային օլիմպիական կոմիտեի ներկայացուցիչներ, հյուրեր: Կրակը հանձնվեց Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովին: Այն արդեն հատուկ ինքնաթիռով տարվել է Սոչի, որտեղից էլ, ձեռքից-ձեռք փոխանցվելով, կհասնի Մոսկվա: Իսկ այնտեղ խաղերի գլխավոր ջահը կվառվի հուլիսի 13-ին՝ պատանեկան համաշխարհային մարզահանդեսի հանդիսավոր բացման օրը:
Հայտնի է դարձել, որ Համաշխարհային պատանեկան խաղերին իրենց մասնակցությունն արդեն հավաստել են 132 երկրների ներկայացուցիչներ:

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՌԱՉՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հետքով

ԵՐԵՎԱՆ

«Հայաստանի ոսկերիչներն աղահովված են փողով, բայց ոչ անհրաժեշտ իրավական դաշտով»

Պնդում են «Ոսկերչություն-98» ցուցահանդես-վաճառքի մասնակիցները

Հայերն աշխարհում հայտնի են որպես հմուտ ոսկերիչներ, արծաթագործներ ու ակնագործներ: Ասում են, որ աշխարհում բացվող յուրաքանչյուր ոսկերչական ցուցահանդեսի մասնակից 10 ոսկերչից մեկը որպես կանոն հայ է: Հունիսի 24-ին ՀՀ կառավարության շենքում բացվեց «Ոսկերչություն-98» ցուցահանդեսը, որն իր մասնակցությամբ պատվեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը վարչապետ Արմեն Դարբինյանի ու կառավարության անդամների ուղեկցությամբ: Ցուցահանդես-վաճառքը կշարունակվի մինչեւ հունիսի 27-ը: Այդ ընթացքում Հայաստանի մոտ երեք տասնյակ ոսկերչական, թանկարժեք քարերի եւ մետաղների մշակման ձեռնարկություններ ու մոտ մեկ տասնյակ անհատ ձեռներեցներ կցուցադրեն իրենց արտադրանքը: Ցուցահանդեսին մասնակցում են նաեւ հայտնի ֆիրմաներ արտասահմանից: Միջոցառման կազմակերպիչները չկարողացան պատասխանել այն հարցին, թե ի՞նչ ընդհանուր արժողության թանկարժեք զարդեղեն է ցուցադրվում ցուցահանդեսում: Տեղեկացվեց միայն, որ դրանք հուսալի ձեռքերում են, տարբեր ոճի ու որակի այս զարդեղենի մեջ կան գերթանկարժեքները, օրինակ՝ ոսկերչական գործարանի արտադրանքներ: Շարքում ցուցադրվում է աղամանդյա քարերով զարդարված 100 հազ. դոլարի արժողության մի մատանի:

Ըստ ցուցահանդեսի նախաձեռնողներից մեկի Երեւանի ոսկերչական գործարանի տնօրեն Էմիլ Գրիգորյանի, նմանատիպ ցուցահանդես-վաճառքներով փորձ է արվում հրավիրել Հայաստանի ոսկերիչներին իրականացնելու ավելի քաղաքակիրթ վաճառք: Ընդհանրապես, ըստ է. Գրիգորյանի, ոսկու առեւտրի ու արտադրության բնագավառում կան լուծման կարիք ունեցող խնդիրներ, Հայաստանում կա հսկա ոսկերչական ներուժ, որը պետք է հովանավորել եւ աջակցել ստեղծելով գործունեության համար հարմար պայմաններ: Դեռեւս չկա անհրաժեշտ օրենսդրական դաշտ, ինչպես նաեւ չկան ոսկերիչների ապահովվածության երաշխիքներ: Պաշտոնական տվյալներով անցյալ տարվա հոկտեմբերի մեկից մինչեւ այս տարվա հունիսի մեկը Երեւանում գրանցվել է մոտ 700 անհատ ձեռներեց ու իրավաբանական անձ, որոնցից մոտ 500-ը վաճառողներ են, մնացածը արտադրողներ: Սակայն նրանց թիվն իրականում 3-4 անգամ ավելի է: Այս տարբերությունը, ոսկերչական գործարանի տնօրենի խոսքերով, պայմանավորված է այն վախով, որ կա Հայաստանում ոսկերիչների նկատմամբ: Այն դեպքում, երբ ոսկերիչը դարձ ի վեր եղել է հարգված արհեստավոր ու պետության քաղաքացի: Հայաստանի ոսկերիչներին համախմբելու նպատակով վերջերս ստեղծվել է Հայ ոսկերիչների միություն, որտեղ ընդգրկված են ոչ միայն ոսկերիչներ, այլեւ ակնագործներ, բնական եւ արհեստական քարեր մշակողներ եւ այլն: Միությունը պետք է փորձի ապահովել փոխադարձ շփումներ ինչպես ներսի, այնպես էլ դրսի ոսկերիչների հետ եւ ծանոթանալ աշխարհում այդ բնագավառում տեղի ունեցող զարգացումներին: Առաջին քայլերն արդեն արված են, եւ ըստ է. Գրիգորյանի, միության գլխավոր նպատակը պետք է լինի ներկայացնել հայ ոսկերչությունը միջազգային շուկայում: Ի դեպ, է. Գրիգորյանը հայտնեց, որ «Ոսկերչություն-98» ցուցահանդեսում իրենք գնելու են մոտ 1 մլն դոլարի զարդեղեն եւ այլ թանկարժեք իրեր արտասահմանում կազմակերպվող առաջիկա ցուցահանդեսներում ներկայացնելու նպատակով:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՔՈՅԱՆ

Վախիրեւը դժգոհում է հարկերից

ՍՈՍԿՎԱ, 24 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Գազարդի» վրա հարկային մամլիչի խստացումը գրեթե հնարավորություն չի թողնում ռուսական գազի դիմաց ԱՊՀ-ի երկրների պարտքի մարման ուղիներ որոնելու համար: Այդ մասին ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հայտարարել է ռուսական բաժնետիրական ընկերության վարչության նախագահ Ռեմ Վյախիրեւը:

Ռեմ Վյախիրեւի խոսքերով, անցյալ տարի Համագործակցության պետությունները վճարել են վառելանյութի մատակարարումների արժեքի միայն մեկ տոկոսը, եւ 1998 թվականին իրավիճակի արմատական փոփոխություն տեղի չի ունեցել: Մինչդեռ պետական հարկային ծառայությունը պահանջում է, որ «Գազարդը» երկրի բյուջե փոխանցի մատակարարված գազի արժեքի մոտ 60 տոկոսը:

Այս պայմաններում ընկերությունը հարկադրված էր չվճարումների համար 50 տոկոսով կրճատել գազի մատակարարումը Մոլդովային եւ 40 տոկոսով՝ Բելառուսին:

«Մենք հասկանում ենք, որ ինչպես Ռուսաստանում, այնպես էլ ԱՊՀ-ի երկրներում, որոնք կառուցվածքային վերափոխումների շրջան են ապրում, առայժմ գազի վճարունակ շուկա չի ստեղծվել», ընդգծել է Ռեմ Վյախիրեւը: Սակայն բաժնետիրական ընկերության վարչության նախագահը համոզված է, որ անհրաժեշտ է պահպանել ռուսական էներգակիրների դիրքերը Համագործակցության շուկաներում:

Սկանդալ Իսրայելի խորհրդարանում

ԹԵԼ ԱՎԻՎ, 24 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Աղմկահարույց քաղաքական սկանդալ է տեղի ունեցել Իսրայելի խորհրդարանում: Հանուն խաղաղության եւ իրավահավասարության արաբական ժողովրդավարական ճակատի (ՀԱԴԱԾ) խորհրդարանական խմբակցության ղեկավար Սալահ Սալիմը փաստորեն պաղեստինցիներին կոչ է արել սպանելու այն ազգակիցներին, ովքեր հողամասեր են վաճառում հրեաներին: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, խորհրդարանի ներքին գործերի հանձնաժողովի նիստի ժամանակ նա «զարմանք» է հայտնել այն առթիվ, որ պաղեստինցիները դադարեցրել են հողերի արաբ առեւտրականների «վերացումը», ովքեր դրանք վաճառում են հրեաներին: Այս հայտարարությունը բուռն արձագանք է հարուցել, եւ մի շարք պատգամավորներ պահանջել են Սալիմին զրկել խորհրդարանական անձեռնմխելիությունից եւ դատի տալ: Իրավապահ մարմինների ներկայացուցիչներն իրենց հերթին հայտնել են, որ պատգամավորի դեմ քրեական գործ է հարուցվել:

Չեչնիայում արտակարգ դրություն եւ պարետային ժամ

ԳՐՈԶՆԻ, 24 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Չեչնիայի նախագահ Ասլան Մասխադովի հրամանագրով հունիսի 25-ին 00 ժամից հանրապետությունում մտցվելու է արտակարգ դրություն: Այն կտեւի մինչեւ հուլիսի 15-ը: Միաժամանակ Չեչնիայի Հանրապետության տարածքում մտցվել է պարետային ժամ, որը գործելու է երեկոյան ժամը 10-ից առավոտյան ժամը 6-ը: «Նովոստի» գործակալության հաղորդմամբ, երեքշաբթի չեչենական խորհրդարանը հաստատել է հանրապետությունում «ստեղծված ներքաղաքական իրավիճակի հետ կապված» արտակարգ դրություն մտցնելու մասին Ա. Մասխադովի որոշումը: Արտակարգ դրության պայմանակարգը ըստ անհրաժեշտության կարող է երկարացվել եւս մեկ ամսով: Չեչնիայի նախագահի մամլո քարտուղար Մայրբեկ Վաչագաեւը հայտարարել է, որ «արտակարգ դրություն մտցնելը կապված չէ անցած կիրակի օրվա դեպքերի հետ, որոնց արդյունքում զոհվեց Չեչնիայի անվտանգության ազգային ծառայության տնօրեն Լեչա Խուլիգովը»: Ըստ նրա պնդման, «նախագահի որոշումը թելադրված է «Արդարության սուր» գործողության պլանը ամբողջ ծավալով իրականացնելու անհրաժեշտությամբ, որը նախատեսում է հանցավոր խմբավորումների վերացում եւ քրեածին իրադրության առողջացում հանրապետությունում»:

ՔՐԵԱԿԱՆ

Փողերի «լվացում». Կա՞ այս հանցատեսակը Հայաստանում

ԵՐԵՎԱՆ, 24 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հունիսի 23-ին եւ 24-ին Գիտությունների ազգային ակադեմիայում աշխատեց Եվրախորհրդի, ՀՀ արտաքին գործերի եւ ՆԳ ու ԱԱ նախարարությունների համատեղ «Ոստիկանության դերը հասարակության մեջ անցումային շրջանում» նշանաբանով սեմինարը: Հունիսի 24-ի թեման էր «Կազմակերպված հանցավորությունը ու փողերի «լվացումը»: Թերեւս ընթերցողը պատկերացնում է առաջին հանցատեսակը, սակայն երկրորդը: Փողերի «լվացումը» ոչ օրինական, հանցագործ ճանապարհով ձեռք բերված գումարների օրինականացումն է դարձյալ ոչ օրինական ճանապարհներով: ՀՀ Քր.օր. չունի այս հանցագործության որակումը, հետեւաբար չունի հոդված, ուրեմն եւ խոսք չի կարող լինել այդ հանցատեսակով քրեական պատասխանատվության ենթարկելու մասին: Ե՞լք: Այս հարցով Արմենպրեսի թղթակիցը դիմեց ՀՀ ՆԳ եւ ԱԱՆ ԿՀԴՊ գլխավոր վարչության տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի վարչության պետի տեղակալ Վարդան Ասվածատրյանին:

– Ղեկավարվում ենք ՀՀ Քր.օր.-ում եղած հոդվածներով, խարդախություն, հափշտակություն, շորթում, հարկերի թաքցնում, չլիցենզավորված գործունեության ծավալում եւ այլն: Նոր օրենսգրքի նախագիծը իր 192 հոդվածով փողերի «լվացման» համար քրեական պատիժ է նախատեսում, տալով հանցագործության հատկանիշը: Նախագծով մի շարք հոդվածներ կլինեն, որոնք թույլ կտան տարանջատել հանցագործությունների տեսակները ոլորտում:

Իսկ ՆԳ եւ ԱԱՆ ԿՀԴՊ վարչությունը հանձ՞նն է առնչվում որպես փողերի «լվացում» որակվող հանցատեսակի հետ: Այս հարցին պատասխանելով, պարոն Ասվածատրյանն ասաց.

– 1997 թվականին 6-րդ վարչության բացահայտած դեպքերից 50 տոկոսը խմբակային են, եւ դրանց մեջ կազմակերպված հանցավորության եւ փողերի «լվացման» տարրեր կան: Ընդ որում, դրանք միմյանց հետ խիստ կապված են, այսինքն, իմ կարծիքով, չեն տարանջատվում:

– Մաֆիա եւ զինված բանդա: Ո՞րն է տարբերությունը:

– Հստակ սահմանում չկա: Բայց մեր՝ պրակտիկներիս կարծիքով, հանցավոր քրեական տարրերի եւ տնտեսական հանցագործների միաձուլվող աշխատանքի արդյունքը բերում է մաֆիայի, բանդայի, որոնք կատարում են եւ քրեական, եւ տնտեսական բնույթի հանցագործություններ, եւ, իհարկե, փողերի լվացում:

– Կլանների գործունեությունը կապ՞նք դրանց հետ:

– Կլանն իր առանձնահատկությունն ունի, որը կարելի է կապել մոնոպոլ գործունեության հետ, ընդ որում, մենք չունենք մոնոպոլիայի դեմ օրենք, շուկայում կլանները կարող են ծավալել իրենց աշխատանքն ու գերշահույթ ստանալ:

– Պրովոկացիոն թող չթվա հարցը, սակայն, սեփականաշնորհման գործընթացը կարելի է որոշ իմաստներով համարել փողերի «լվացման» լավ տարբերակ: Գուցե պատահական չէ՞, որ հենց այդ ընթացքում լուծարվեց Հանրային սեփականության հափշտակությունների եւ ապօրինաշինության դեմ պայքարի ծառայությունը (ԲԽՍՍ-ը):

– Իմ կարծիքով, լուծարումը սխալ էր, որովհետեւ ոչ միայն սեփականաշնորհման ընթացքը, այլեւ տնտեսական շատ հանցագործություններ մոտ երկու տարի դուրս մնացին հսկողությունից: Դա, ի վերջո, անդրադարձավ Հայաստանի տնտեսության վրա:

Փողերի «լվացման» արտահայտումը սեփականաշնորհման գործընթացում այն էր, որ սերտիֆիկատների փողոցային առեւտուր կատարվեց: Նրանք, ովքեր ունեին գումարներ, էժան գներով ձեռք բերեցին սերտիֆիկատներ, որոնց միջոցով էլ՝ օբյեկտներ: Ի վերջո, կապիտալը կարգավորվեց, փողերը «լվացվեցին»:

– Տարադրամի կուրսի իջեցումն ու բարձրացումը՝ ապատնումները արդյո՞ք փողերի «լվացման» հետ կապ ունեն:

– Տեսականորեն կարելի է կապել: Կան խմբեր, որոնք միտումնավոր ազդում են շուկայի վրա՝ տարադրամի առք ու վաճառքում իրենց շահերը սատանալով:

– Փողերի «լվացման» առաջին խողովակը ո՞ՐՆ եք համարում:

– Առաջին խողովակն, իմ կարծիքով, խարդախ ֆինանսական կոմպանիաներն էին: Ավանդատուներն հազվին մեծ շահույթներ շատերը ստացան. փողերի «լվացում» արեցին:

Խաղատները, որոնք այնքան շատացել են Հայաստանում, պարոն Ասվածատրյանի կարծիքով, փողերի «լվացարան» չեն դեռեւս. «որովհետեւ մենք չունենք եկամուտների հայտարարագրման օրենք, որ խաղատան տնօրենը պարտավորվի պետության առաջ հայտարարագրել իր եկամուտները: Երբ դա լինի, այն ժամանակ, գուցե կգտնեն փողերի լվացման մեջ դեր ունենա, եւ տերը իր գումարները ներկայացնի որպես խաղատնից ստացված շահույթ:

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ (ԲՀԻՕՀՀՄ)

ԲՀԻՕՀՀՄ-ը հայտարարում է մրցույթ երկու տարվա ընթացքում երեք մեկշաբաթյա սեմինար-վերապատրաստման մասնակցելու համար: Ծրագիրը հետաքրքրում է հետեւյալ նպատակները.

■ ռեգիոնի իրավապաշտպան խմբերի կանանց իրավունքների պաշտպանության արդյունավետ ռազմավարության իրականացում,

■ կանանց իրավունքների պաշտպանության տեղական մասնագետների պատրաստում,

■ ռեգիոնալ կամ ազգային խմբերի կազմավորում՝ տեղական ոչ պետական կազմակերպություններին կանանց իրավունքների պաշտպանության մեթոդների ուսուցման նպատակով,

■ նշված խմբերի հնարավորությունների ուժեղացում՝ ռեգիոնալ եւ միջազգային շրջանակներում կանանց իրավունքների պաշտպանական եւ հեղինակավոր պաշտպան լինելը:

Մրցույթին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ կազմակերպությունները:

Դիմումների ձեւերը կարելի է ստանալ ԲՀԻՕՀՀՄ-ի գրասենյակում:

Դիմումներն ընդունվում են մինչեւ 1998 թ. սեպտեմբերի 11-ը հետեւյալ հասցեով՝

Երեւան 19, Այգեձորի 53բ
Հեռ. 272119, 271713
Հեռ/ֆաքս 151 088

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրքերով - մագնիսական մկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)

«Ֆիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան 23, Արգիշտիի 2 Գրանցման թիվ 65. Դասիլ 69149. Պատուեր 849 Տպաքանակը՝ 3500 Ստորագրված է տպագրության՝ 24.05.1998 Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@